



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՉՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 13(353) «30» հուլիսի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ		
221	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մայիսի 14-ի ՆՀ-62 հրամանագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-82-Ն հրամանագիրը.....	3
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
222	«Արցախի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման, իրականացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 11-ի N 70 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 593-Ն որոշումը.....	4
223	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 27-ի N 133 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 594-Ն որոշումը.....	45
224	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 602-Ն որոշումը.....	51
225	«Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 607-Ն որոշումը.....	53
226	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 611-Ն որոշումը.....	55
227	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 616-Ն որոշումը.....	60
228	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ	

	կառավարության N 617-Ն որոշումը.....	61
229	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 618-Ն որոշումը.....	62
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ	
230	«Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վիտալի Հայրապետյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին» ԱՀ բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-14-Ո-1/2018թ. որոշումը և հատուկ կարծիքը	63

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 14-Ի ՆՀ-62 ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մայիսի 14-ի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՀ-62 հրամանագիրը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2018թ. հուլիսի 27
Ստեփանակերտ
ՆՀ-82-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հուլիսի 2018թ.

N 593-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ,
ԴԵՂԱՏՆԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՆՇՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՑԻ ՁԵՎԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N70 ՈՐՈՇՈՒՄԸ
ՈՒժԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ս շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետությունում դեղերի արտադրության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետությունում դեղերի արտադրության իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Արցախի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Արցախի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Արցախի Հանրապետությունում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Արցախի Հանրապետությունում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Սահմանել, որ դեղերի որակն ապահովող հիմնական տեխնոլոգիական պրոցեսների նկարագրության, արտադրության տեխնիկական հազեցվածության, արտադրության կառուցվածքի գործառնական ստորաբաժանումների, արտադրության և որակի հսկման կազմակերպման փորձաքննությունը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ լիցենզիայի առկայության դեպքում, ինչպես նաև համապատասխան լիցենզիա ունեցող այլ կազմակերպությունների կողմից:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, բժշկա-

կան օգնության և սպասարկման, բժշկական միջին մասնագիտական ու բարձրագույն կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 70 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱՊՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից մարդու կամ կենդանիների համար օգտագործվող, ինչպես նաև հետազոտական նպատակներով լիցենզավորման ենթակա դեղերի արտադրության (այսուհետ՝ դեղերի արտադրություն) իրականացման լիցենզավորման կարգը (այսուհետ՝ կարգ)՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների:

2. Դեղերի արտադրությունը դեղերի սերիական թողարկումն է, որն ընդգրկում է հետևյալ արտադրական գործընթացները՝ էլանյութերի ձեռքբերումը, արտադրական տեխնոլոգիական գործընթացները, որակի հսկումը, փաթեթավորումը (վերափաթեթավորում), պիտակավորումը (վերապիտակավորում), պահպանումը, բացթողումը և հարակից հսկողությունը: Հարակից հսկողությունն արտադրական գործընթացների նկատմամբ արտադրողի նշանակած պատասխանատու անձանց կողմից իրականացվող հսկողությունն է՝ ուղղված դեղերի արտադրության գործընթացներում պատշաճ արտադրական գործունեության կանոնների պահպանմանը:

3. Լիցենզիան տրվում է արտադրական գործընթացների առնվազն մեկի իրականացման համար՝ բացառությամբ առանձնացված էլանյութերի ձեռքբերման, պահպանման և որակի հսկման գործընթացների:

4. Արցախի Հանրապետությունում դեղերի արտադրություն իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Արցախի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

5. Դեղերի արտադրության համար լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, անժամկետ՝ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Դեղերի արտադրության լիցենզիաները տրվում են դեղերի արտադրության լիցենզիա ստանալու համար փորձաքննություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն) կողմից տրված դրական փորձագիտական եզրակացության հիման վրա:

7. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝

1) լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով դրա մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախազգուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին:

2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված համապատասխան գործողության համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզա-

վորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց մասին համապատասխան որոշումները.

4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է՝ պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է ճանաչվում:

8. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են դեղերի արտադրության կազմակերպման և իրականացման կանոնակարգին համապատասխան՝ լիցենզիայում նշված վայրում:

9. Դեղերի արտադրության լիցենզիա ստացած անձինք ոչ ուշ, քան յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը լիազոր մարմին են ներկայացնում հաշվետվություն արտադրվող դեղերի մասին՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի:

10. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

**II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՈՒՍԱԿՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

11. Հայտատուն դեղերի արտադրության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն սույն կարգի N 1 ձևի.

2) դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը՝ երկու օրինակից՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի.

3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ.

4) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անունով տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները.

5) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

12. Լիցենզիա ստանալու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Դեղերի արտադրության իրականացման համար լիցենզիա ստացած իրավաբանական անձը դեղերի արտադրության իրականացման լիցենզիայի պատճենները փակցնում է իր գտնվելու և գործունեության իրականացման վայրերի տեսանելի հատվածում, իսկ անհատ ձեռնարկատերը՝ իր գործունեության իրականացման վայրի տեսանելի հատվածում:

14. Արցախի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող անձինք արտադրության մեջ օգտագործում են միայն պատշաճ արտադրական կանոններին համապատասխան արտադրված ակտիվ դեղագործական բաղադրամասեր:

15. Դեղերի արտադրության ընթացքում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեղերի որակին չհամապատասխանող արտադրանքը որակի անհամապատասխանության հայտնաբերումից հետո ենթակա է հետ հավաքման՝ 15 օրվա ընթացքում և ոչնչացման՝ լիազոր մարմնի հաստատած կարգին համապատասխան:

16. Արտադրողի կողմից դեղերի արտադրության յուրաքանչյուր սերիա ենթակա է լաբորատոր և փաստաթղթային փորձաքննության, որի իրականացման կարգը, ժամկետը և պայմանները սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

17. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում համապատասխան որակավորված անձի մասին տեղեկատվություն՝ կցելով համապատասխան որակավորումը հավաստող բարձրագույն մասնագիտական կրթության վկայականի, ինչպես նաև հետբուհական կրթության, վերապատրաստումների, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում վերապատրաստման վկայականների (հավաստագրեր) պատճենները, իսկ հետագա փոփոխության դեպքում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

IV. ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

18. Սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պահանջը չի սահմանափակում հայտատուի կողմից դեղերի արտադրության գործընթացի մասին այլ տեղեկություններ ներկայացնելը: Դեղերի արտադրության լիցենզիայի հայտի բավարարման դեպքում լիցենզիայի հետ միաժամանակ լիցենզավորված անձին տրամադրվում է դեղերի արտադրության կանոնակարգի՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված մեկ օրինակ:

19. Լիցենզավորված անձի կողմից դեղերի արտադրության կանոնակարգում կատարվող փոփոխությունները, կամ լրացումները, կամ դեղերի արտադրության նոր կանոնակարգերը լիազոր մարմնի կողմից հաստատվելու նպատակով նախապես ներկայացվում են լիազոր մարմին երկու օրինակից:

20. Յուրաքանչյուր հաջորդ դեղաձևի արտադրության դեպքում արտադրության կանոնակարգում փոփոխությունների, կամ լրացումների նպատակով հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում նաև փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական եզրակացությունը՝ ըստ նոր դեղաձևերի՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ:

21. Լիազոր մարմնի ղեկավարը տասնհինգօրյա ժամկետում հրաման է ընդունում դեղերի արտադրության կանոնակարգում առաջարկվող փոփոխությունները կամ լրացումները կամ նոր կանոնակարգը հաստատելու կամ դրանք մերժելու մասին: Հրամանի պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում (փոստով առաքվում) է լիցենզավորված անձին:

22. Դեղերի արտադրության կանոնակարգում կատարվող փոփոխությունները կամ լրացումները, կամ դեղերի արտադրության նոր կանոնակարգերը՝ լիցենզավորող մարմնի կողմից մերժվելու դեպքում, լիցենզավորված անձը կարող է դիմել դեղերի

արտադրության կանոնակարգում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր կանոնակարգ ընդունելու համար սույն կարգով սահմանված ընդհանուր կարգով:

23. Դեղերի արտադրության կազմակերպման և իրականացման կանոնակարգի փոփոխությունները, կամ լրացումները, կամ նոր կանոնակարգերը լիցենզավորող մարմինը մերժում է, եթե դրանք

1) հակասում են Արցախի Հանրապետության օրենսդրությանը.

2) չեն համապատասխանում սույն կարգի N2 ձևով նախատեսված դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկին.

3) նոր դեղաձևի արտադրության դեպքում՝ լիազոր մարմին չի ներկայացվել փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ:

24. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

V. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ

25. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթուրված տեղեկություններ կամ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,

4) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ,

5) դեղերի արտադրության կանոնակարգը չի համապատասխանում սույն կարգի N 2 ձևով սահմանված պահանջներին:

26. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում առաքվում է հայտատուին:

ԱՀ առողջապահության նախարար
-ին
(անունը, հայրանունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը _____

2. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

3. Իրավաբանական անձի վկայականի պետական գրանցման համարը
□□□□□□□□□□

4. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի հաշվառման համարը
□□□□□□□□□□

5. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)

6. Կից ներկայացնում եմ՝

Դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը (1 օրինակից),

Փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների, տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հազեցվածության վերաբերյալ,

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անունով տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

Ց Ա Ն Կ

ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Փորձագիտական եզրակացության համարը, օրը, ամիսը, տարեթիվը

1. Հայտատուի անունը, ազգանունը կամ անվանումը

2. Կազմակերպական-իրավական ձևը

3. Գտնվելու (բնակվելու) և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում)

1. Արտադրության տեսակը՝	
<input type="checkbox"/> Մարդու օգտագործման դեղերի արտադրություն <input type="checkbox"/> Անասնաբուժական դեղերի արտադրություն <input type="checkbox"/> Հետազոտական նպատակներով դեղերի արտադրություն Արտադրական գործընթացների տեսակները	
	Ստերիլ արտադրանք
	1) <i>ասեպտիկ պայմաններում արտադրված դեղաձևեր</i> ա. մեծ ծավալով հեղուկներ բ. լիոֆիլիզատներ գ. փափուկ դեղաձևեր դ. փոքր ծավալով հեղուկներ ե. կարծր դեղաձևեր և իմպլանտներ զ. ասեպտիկ պայմաններում արտադրված այլ արտադրանք
	2) <i>վերջնական ստերիլիզացման ենթակա դեղաձևեր</i> ա. մեծ ծավալով հեղուկներ բ. փափուկ դեղաձևեր գ. փոքր ծավալով հեղուկներ դ. կարծր դեղաձևեր և իմպլանտներ ե. վերջնական ստերիլիզացման ենթակա այլ արտադրանք
	3) <i>սերիայի բացթողման հավաստագրում</i>
2.	ոչ ստերիլ արտադրանք
	1) <i>ոչ ստերիլ դեղաձևեր</i> ա. կարծր դեղապատիճներ բ. փափուկ դեղապատիճներ գ. ծամելու դեղաձևեր դ. ներծծված մատրիցաներ ե. հեղուկներ՝ արտաքին օգտագործման համար զ. հեղուկներ՝ ներքին օգտագործման համար է. բժշկական գազեր ը. այլ կարծր դեղաձևեր թ. ճնշման տակ գտնվող դեղաձևեր ժ. ռադիոնուկլիդային զեներատորներ ծա. փափուկ դեղաձևեր ժբ. մոմիկներ

	<p>ժգ. դեղահատեր ժդ. սպեղանիներ ժե. ինտրարումինալ դեղաձևեր ժզ. անասնաբուժական խառնուրդներ ժէ. ոչ ստերիլ այլ արտադրանք</p>
	<i>2) սերիայի բացթողման հավաստագրում</i>
3.	Կենսաբանական դեղեր
	<p><i>1) կենսաբանական դեղեր</i> ա. արյան արտադրանքներ բ. իմունաբանական արտադրանքներ գ. բջջային թերապիայի արտադրանքներ դ. գենային թերապիայի արտադրանքներ ե. կենսատեխնոլոգիական արտադրանքներ զ. մարդու կամ կենդանիների օրգաններից արտադրանքներ է. այլ կենսաբանական դեղեր</p>
	<p><i>2) սերիայի բացթողման հավաստագրում</i> ա. արյան արտադրանքներ բ. իմունաբանական արտադրանքներ գ. բջջային թերապիայի արտադրանքներ դ. գենային թերապիայի արտադրանքներ ե. կենսատեխնոլոգիական արտադրանքներ զ. մարդու կամ կենդանիների օրգաններից արտադրանքներ է. այլ կենսաբանական դեղեր</p>
4.	Այլ արտադրանքներ կամ արտադրական գործունեություն
	<p><i>1) արտադրություն</i> ա. բուսական դեղեր բ. հումեոպատիային դեղեր գ. կենսաբանական ակտիվ էլանյութեր դ. այլ</p>
	<p><i>2) ակտիվ դեղանյութերի (օժանդակ նյութերի) վերջնական արտադրանքի մանրէազերծում</i> ա. ֆիլտրում բ. չոր տաքացում գ. խոնավ տաքացում դ. քիմիական ե. գամմա ճառագայթում զ. էլեկտրոնային ճառագայթ է. այլ</p>
5.	Փաթեթավորում
	<p><i>1) առաջնային փաթեթավորում</i> ա. կարծր դեղապատիճներ բ. փափուկ դեղապատիճներ գ. ծամելու դեղաձևեր դ. ներծծված մատրիցաներ ե. հեղուկներ՝ արտաքին օգտագործման համար զ. հեղուկներ՝ ներքին օգտագործման համար է. բժշկական գազեր ը. այլ կարծր դեղաձևեր թ. ճնշման տակ գտնվող դեղեր ժ. ռադիոնուկլիդային գեներատորներ ժա. փափուկ դեղաձևեր ժբ. մոմիկներ ժգ. դեղահատեր ժդ. սպեղանիներ ժե. ինտրարումինալ դեղաձևեր ժզ. անասնաբուժական խառնուրդներ ժէ. ոչ ստերիլ այլ արտադրանք</p>
	<i>2) երկրորդային փաթեթավորում</i>

6.	Որակի հսկում
	1) մանրէաբանական. ստերիլությունը
	2) մանրէաբանական. ոչ ստերիլությունը
	3) քիմիական/ֆիզիկական
	4) կենսաբանական
7.	Լրացուցիչ նշումներ

4. Առանձնացված արտադրության պայմաններ պահանջող արտադրանք՝ պենիցիլիններ, ցեֆալոսպորիններ, սուլֆոնամիդներ, ցիտոտոքսիկներ, հորմոնալ ակտիվությամբ նյութեր կամ այլ պոտենցիալ վտանգավոր ակտիվ բաղադրիչներ պարունակող դեղերի, ռադիոդեղագործական արտադրանքի արտադրության դեպքում անհրաժեշտ է դեղերի արտադրության կանոնակարգի բոլոր կետերում (բացի սույն ցանկի 5-րդ կետի 2-րդ ենթակետից և 6-րդ կետից) և հատուկ նշումներում կատարել հավելյալ գրառումներ՝ նշելով համապատասխան խմբի անվանումը:

Որակավորված անձը (անձինք) _____

(անունը, ազգանունը, որակավորումը)

Դեղերի արտադրության իրականացման համար նախատեսված տեխնիկատեխնոլոգիական հազեցվածության, տարածքի և արտադրամասերի մասին տեղեկություններ (կցելով տարածքի հատակագիծը):

Հաստատում եմ ներկայացված տեղեկությունների իսկությունը

(հայտատու իրավաբանական անձի անվանումը՝ տնօրենի անունը՝ ազգանունը՝ ստորագրությունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը՝ ստորագրությունը)

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ձև N 3

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՏԱԴՐՎՈՂ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

NN ը/կ	Արտադրվող դեղի անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը	Սերիան	Քանակը

_____ օրը, ամիսը, տարեթիվը _____

(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի հուլիսի 25-ի N 593-Ն որոշման

Ձև N 1



**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԼԻՑԵՆԶԻԱ Ա- ԴԱ-000000

Տրված՝ _____ 20 թվականին
Գործունեության տեսակը _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

**Արցախի Հանրապետության
առողջապահության նախարար**

ստորագրություն

Կ. Տ.



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ՂԱ-000000

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Արցախի Հանրապետության
առողջապահության նախարար

ստորագրություն

Կ. Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Արցախի Հանրապետության առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորման ենթակա դեղատնային գործունեության իրականացման (այսուհետ՝ դեղատնային գործունեություն) լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջներին:

2. Արցախի Հանրապետությունում դեղատնային գործունեություն իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Արցախի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Դեղատնային գործունեության իրականացման լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, անժամկետ՝ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝

1) լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով դրա մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախագրուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին.

2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված համապատասխան գործողության համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա

նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց մասին համապատասխան որոշումները:

4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է՝ պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է ճանաչվում:

5. Դեղատնային գործունեության իրականացման դեպքում աշխատանքն իրականացնող համապատասխան մասնագետների գործունեության համար պահանջվում է մասնագիտական որակավորման ստուգում, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

6. Իրենց գործունեության իրականացման ընթացքում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում իրականացնող անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելիս լիցենզիայի «Գործունեության տեսակը» տողում, գործունեության տեսակը նշելուց բացի, կատարվում է նաև հետևյալ նշումը՝ «(ներառյալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում)»:

7. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

8. Լիցենզիայի վերաձևակերպումը կամ գործողության կասեցումը կամ դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Հայտատուն դեղատնային գործունեության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն սույն հավելվածի Ձև N 1-ի:

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անունով տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

10. Այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին հայտ (համապատասխանաբար Ձև N 2, Ձև N 3):

2) այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում դեղատնային գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և հայտատուի անունով (անվանումով) տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

3) լիցենզիայի բնօրինակը գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում:

11. Դեղատնային գործունեության լիցենզիա ստանալու, այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին հայտերում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող

մարմինը դրանք հայտնաբերելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային նամակագրության կամ հեռախոսային կապի միջոցով, հայտատուի ընտրած եղանակով, առաջարկում է հայտատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և այն ներկայացնել լիազոր մարմնին:

12. Դեղատնային գործունեության լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը լիազոր մարմնի կողմից իրականացվում է ընտրանքային ուսումնասիրության միջոցով, որի արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն: Ընտրանքային ուսումնասիրության անցկացման կարգը սահմանում է լիազոր պետական մարմինը:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Դեղատնային գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստացած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը դեղատանը կամ դեղատնային կրպակում դեղերի ընդունում, պահպանում, իրացում և բացթողում կարող է իրականացնել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված և պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատություն ավարտած, օրենքով սահմանված կարգով որակավորված, վերջին հինգ տարվա ընթացքում լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով մասնագիտական վերապատրաստում անցած դեղագետների և դեղագործների միջոցով: Ընդ որում, դեղատնային գործունեությամբ զբաղվելու լիցենզիա ստացած անհատ ձեռնարկատերը, էթե նա համապատասխանում է սույն կետով դեղագետին կամ դեղագործին ներկայացվող որակավորման պահանջներին, դեղատանը կամ դեղատնային կրպակում դեղերի ընդունում, պահպանում, իրացում և բացթողում կարող է իրականացնել անձամբ:

14. Դեղատնային գործունեությունը դեղատան միջոցով իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը դեղատանը դեղերի պատրաստում կարող է իրականացնել Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված և պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատություն ավարտած, օրենքով սահմանված կարգով որակավորված, վերջին հինգ տարվա ընթացքում լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով մասնագիտական վերապատրաստում անցած դեղագետների միջոցով: Ընդ որում, դեղատնային գործունեությունը դեղատան միջոցով իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պետք է ունենա առնվազն մեկ դեղագետ՝ բացառությամբ այն դեպքի, երբ անհատ ձեռնարկատերը համապատասխանում է սույն կետով դեղագետին ներկայացվող որակավորման պահանջներին:

15. Մեկից ավելի վայրերում դեղատնային գործունեությամբ զբաղվելու դեպքում՝

1) յուրաքանչյուր դեղատանը գործունեություն իրականացնող դեղագետը կամ դեղագործը, իսկ մեկից ավելի լինելու դեպքում՝ դեղագետներից կամ դեղագործներից մեկն իրավաբանական անձի գործադիր մարմնի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նշանակվում է որպես տվյալ դեղատան պատասխանատու անձ (պաշտոնատար անձ):

2) յուրաքանչյուր դեղատնային կրպակում գործունեություն իրականացնող դեղագետը կամ դեղագործը, իսկ մեկից ավելի լինելու դեպքում՝ դեղագետներից կամ դեղագործներից մեկն իրավաբանական անձի գործադիր մարմնի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նշանակվում է որպես տվյալ դեղատնային կրպակի պատասխանատու անձ (պաշտոնատար անձ):

16. Սույն կարգի 15-րդ կետով նախատեսված անձը պատասխանատու է համապատասխան դեղատանը և դեղատնային կրպակում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ ու գերատեսչական ակտերով դեղատնային գործունեության իրականացման համար սահմանված պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման համար:

17. Կառուցվածքին և գույքային հագեցվածությանը ներկայացվող պահանջներն են՝

1) Դեղատան համար՝

ա. առնորի սրահ (ներառյալ սպասասրահ)՝ 12 քառակուսի մետր (բացառությամբ սույն կարգի 23-րդ կետով սահմանված դեպքի), ցուցադրման սեղաններ, ցուցապահա-

րաններ, փակ պահարաններ, վաճառասեղան, սառնարան, ջերմաչափ, դեղատոմսերի ընդունման և պատրաստված դեղերի բացթողման համար հատված,

բ. ասիստենտական սենյակ, որտեղ պատրաստում են դեղատոմսով պատրաստվող դեղերը և տեղադրված են պահարաններ շշերի և դեղափոշիների պահպանման համար, ասիստենտական սեղան, հեղուկների չափիչ ամանեղեն, լաբորատոր ամանեղեն, հավանգ, կշեռք և կշռաքարեր՝ դեղանյութի կշռման համար, սառնարան, սենյակային ջերմաչափ,

գ. փաթեթավորման սենյակ՝ լվացարան, ամանեղենի չորացման մանրագերծման էլեկտրական պահարան, սեղան, աթոռ, ջրի թորման սարք,

դ. վտանգավոր թափոնների պահպանման սենյակ կամ պահարան կամ արկղ,

ե. անձնական ու աշխատանքային հագուստի միմյանցից մեկուսացված հնարավորությամբ պահարան,

զ. սանհանգույց լվացարանով.

2) դեղատնային կրպակի համար՝

ա. առևտրի սրահ (ներառյալ սպասարահ)՝ նվազագույնը 12 քառակուսի մետր, ցուցադրման սեղաններ, ցուցապահարաններ, փակ պահարաններ, վաճառասեղան, սառնարան, ջերմաչափ,

բ. վտանգավոր թափոնների պահպանման սենյակ կամ պահարան կամ արկղ,

գ. անձնական ու աշխատանքային հագուստի միմյանցից մեկուսացված հնարավորությամբ պահարան,

դ. սանհանգույց լվացարանով:

18. Դեղատանը և դեղատնային կրպակում տեխնիկատեխնոլոգիական միջոցներով պետք է ապահովվի դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

19. Այն դեղատները կամ դեղատնային կրպակները, որոնք իրացնում և (կամ) բաց են թողնում թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր, պետք է ունենան թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պահպանման համար պահեստ (բունկեր) կամ հատակին ամրացված չհրկիզվող պահարան: Պահեստը հանդիսանում է սենք: Պահեստը կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չհրկիզվող պահարանը, պետք է ունենան խոնավաչափ և ապահովված լինեն ազդանշանային համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

20. Դեղատան պահեստը և դեղատնային կրպակի պահեստը (առկայության դեպքում) դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ ապահովելու նպատակով պետք է կահավորված լինեն փակ պահարաններով, վիրակապական և ռետինե ապրանքների համար պետք է ունենա առանձին պահարաններ ու խոնավաչափ:

21. Դեղատան պահեստում և դեղատնային կրպակի պահեստում (առկայության դեպքում) տեխնիկատեխնոլոգիական միջոցներով պետք է ապահովվի դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

22. Դեղատանը և դեղատնային կրպակում դեղագետների ու դեղագործների աշխատանքները կազմակերպվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքին համապատասխան:

23. Հասարակական շենքերի (առևտրի կենտրոններ, սուպերմարկետներ և այլն), բժշկական հաստատությունների, վարչական շենքերի, մետրոների, օդանավակայանների, երկաթուղային և ավտոկայարանների սպասասրահներում տեղադրվող դեղատնային կրպակների համար առանձին սպասարահ ու սանհանգույց ունենալը պարտադիր չէ, եթե դրանցում կան ընդհանուր օգտագործման սանհանգույց և սպասարահ: Այս դեպքում առևտրի սրահի մակերեսի նվազագույն թույլատրելի չափը սահմանվում է 6 քառակուսի մետր:

24. Սույն կարգով նախատեսված դեղատան կամ դեղատնային կրպակի համար հատկացված տարածքները պետք է տեղակայված լինեն միննույն շինության կամ շենքի տարածքում և ունենան գործառնական կապ:

25. Սույն կարգի իմաստով դեղատան կամ դեղատնային կրպակի սենքերն ունեն գործառնական կապ, եթե գտնվում են միննույն շենքի կամ շինության տարածքում, ունեն մեկ ընդհանուր մուտք:

26. Դեղատան կամ դեղատնային կրպակի սպառողների համար տեսանելի վայրում պետք է փակցված լինեն տեղեկատու դեղատների հեռախոսահամարները (հեռախոսահամարները տեղադրված են լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում և թարմացվում են կիսամյակային պարբերականությամբ), սպասարկող դեղագետի կամ դեղագործի անունը, ազգանունը (լիցենզիա ստանալուց հետո):

27. Դեղատանը կամ դեղատնային կրպակում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով պետք է առկա լինեն դեղագրքեր և դեղագիտական-տեղեկատվական ձեռնարկներ, դեղատոմսով և առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի ցանկ (տեղադրված է լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում և թարմացվում է կիսամյակային պարբերականությամբ):

28. Տեղեկատու դեղատանը կամ դեղատնային կրպակում պետք է լինեն տվյալ շրջանի, իսկ Ստեփանակերտ քաղաքի դեպքում՝ քաղաքի տարածքում գործող նվազագույնը հինգ դեղատան հեռախոսահամարներ (լիցենզիա ստանալուց հետո):

29. Սույն կարգի իմաստով տեղեկատու է համարվում սպառողի կողմից փնտրվող դեղի առկայության մասին տեղեկատվության (ներառյալ՝ տեղեկատվություն այլ դեղատներում կամ դեղատնային կրպակներում դրա առկայության, դրանց աշխատանքային ժամերի, կոնտակտային տվյալների վերաբերյալ) ստացման, պահպանման և տրամադրման համար պարբերաբար թարմացվող, ինչպես նաև արագ փնտրելու հնարավորություն ընձեռող տեղեկատվական բազա ունեցող և այդ տեղեկատվությունը տրամադրող դեղատունը կամ դեղատնային կրպակը, որն այդ ծառայության համար ունի հատուկ նախատեսված հեռախոսահամար:

30. Դեղատնից կամ դեղատնային կրպակից դեղերը դեղատոմսով բաց են թողնվում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

31. Դեղատանը և դեղատնային կրպակում սույն կարգի 15-րդ կետով նախատեսված պատասխանատու անձի (պաշտոնատար անձ) կողմից պետք է վարվի բժշկական թափոնների հաշվառում՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով:

32. Դեղատանը և դեղատնային կրպակում դեղերը պետք է պահվեն ըստ ֆարմակոլոգիական խմբերի՝ դրանց ուղեկցող փաստաթղթերում սահմանված դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմում և համապատասխան լուսավորության ու խոնավության պայմաններում:

33. Դեղատունը և դեղատնային կրպակն արտաքին հատվածից պետք է ձևավորված լինեն կանաչ գույնի «Դեղատուն» կամ «Դեղատնային կրպակ» վերտառությամբ և խաչի նշանով՝ տեսանելի վայրում փակցված ցուցանակով:

34. Դեղատունը և դեղատնային կրպակը պետք է ապահովված լինեն առաջին բժշկական օգնության պարագաներով, որոնց ցանկը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

35. Դեղատան կամ դեղատնային կրպակի առևտրի՝ դեղատնային գործունեության իրականացման լիցենզիայի պատճենները փակցվում են սրահի կամ սպասասրահի՝ սպառողների համար տեսանելի հատվածում:

36. Դեղատնից և դեղատնային կրպակից կարող են վաճառվել ու բաց թողնվել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված և պիտանիության ժամկետի մեջ գտնվող դեղերը:

37. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դեղատանը կամ դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենները.

2) դեղատանը կամ դեղատնային կրպակում աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի բարձրագույն մասնագիտական կրթության վկայականի (դիպլոմ), հետբուհական կրթության և վերջին հինգ տարիների ընթացքում մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները, իսկ դեղագործի դեպքում՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագործի միջին մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականի պատճենը և վերջին հինգ տարիների ընթացքում մասնագիտական վերապատրաստում անցնելու փաստը հավաստող վկայականների պատճենները.

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը:

38. Լիցենզավորված անձի կողմից հայտում կամ սույն կարգի 37-րդ կետով սահմանված փաստաթղթերում ներկայացված դեղատնային գործունեության համար սահմանված պարտադիր պահանջների և պայմանների փոփոխման դեպքում (ներառյալ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի, հազեցվածության փոփոխման) լիցենզավորված անձը տասը աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին հայտնում է իրականացված փոփոխության մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՑԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

39. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 10-րդ կետով նախատեսված ժամկետում կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,

4) դեղատնային գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ,

5) սույն կարգի 17-21-րդ, 23-25-րդ և 27-րդ կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում:

40. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում առաքվում է հայտատուին:

Հ Ա Յ Տ
ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գտնվելու, բնակության վայրը _____

3. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը _____

4. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը 0000000000

5. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը 0000000000

6. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում)

7. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)

8. Դեղատնային գործունեության իրականացման ձևը՝

դեղատուն

դեղատնային կրպակ

9. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում՝

այո

ոչ

10. Դեղատանը կամ դեղատնային կրպակում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով առկա են՝

դեղագրքեր և դեղագիտական-տեղեկատվական ձեռնարկներ

դեղատոմսով և առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի ցանկ

11. Դեղատան (դեղատնային կրպակի) տարածքները և դրանց հագեցվածությունը

№№ ը/կ	Դեղատան կամ դեղատնային կրպակի տարածքները և դրանց հագեցվածությունը	Թույլատրելի նվազագույն չափերը (քառ. մետր)	Դեղատան կամ դեղատ- նային կրպակի տարածքների չափերը (քառ. մետր)	Դեղատան կամ դեղատնային կրպակի տարածքների տեխնիկական հագեցվածությունը
1.	Առևտրի սրահ (ներառյալ սպասասրահը)	12		<input type="checkbox"/> ցուցադրման սեղաններ <input type="checkbox"/> ցուցապահարաններ <input type="checkbox"/> փակ պահարաններ <input type="checkbox"/> վաճառասեղան <input type="checkbox"/> սառնարան <input type="checkbox"/> ջերմաչափ <input type="checkbox"/> դեղատոմսերի ընդունման և պատրաստված դեղերի բացթողման համար նախատեսված հատված
2.	Ասիստենտական սենյակ			<input type="checkbox"/> պահարաններ՝ շշերի և դեղափո- շիների պահպանման համար <input type="checkbox"/> ասիստենտական սեղան <input type="checkbox"/> հեղուկների չափիչ ամանեղեն

				<input type="checkbox"/> լաբորատոր ամանեղեն <input type="checkbox"/> հավանգ <input type="checkbox"/> կշեռք և կշռաքարեր՝ դեղանյութի կշռման համար <input type="checkbox"/> սառնարան <input type="checkbox"/> սենյակային ջերմաչափ
3.	Փաթեթավորման սենյակ			<input type="checkbox"/> լվացարան <input type="checkbox"/> ամանեղենի չորացման, մանրէագերծման էլեկտրական պահարան <input type="checkbox"/> սեղան <input type="checkbox"/> աթոռ <input type="checkbox"/> ջրի թորման սարք
4.	Վտանգավոր թափոնների պահպանման պահարան կամ արկղ, կամ սենյակ			<input type="checkbox"/> սենյակ <input type="checkbox"/> պահարան <input type="checkbox"/> արկղ
5.	Անձնական ու աշխատանքային հագուստի միմյանցից մեկուսացման հնարավորությամբ պահարան			<input type="checkbox"/> պահարան
66. Ոչխարների և այծերի ադենոմատոզ (Adenomatosis)
67. Խոզերի դասական ժանտախտ (*Classical swine fever*)
68. Խոզերի աֆրիկական ժանտախտ (African swine fever)
69. Խոզերի էնզոոտիկ էնցեֆալոմելիտ (Enzootic encephalomyelitis)

70. Խոզերի բշտային հիվանդություն (Swine vesicular disease)
71. Խոզերի կարմրախտ (Swine erysipelas)
72. Խոզերի հեմոֆիլոզային պոլիսերոզիտ (Glassers disease)
73. Խոզերի հեմոֆիլոզային պլևրոպնեյմոնիա (Porcine pleuropneumonia)
74. Խոզերի վիրուսային զաստրոէնտերիտ (Transmissible gastroenteritis)
75. Խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր սինդրոմ (Porcine reproductive and respiratory syndrome)
76. Խոզերի գրիպ (Swine influenza)
77. Չիերի խլնախտ (Glanders)
78. Չիերի էպիզոոտիկ լիմֆանգիտ (Epizootic lymphangitis)
79. Չիերի անեմիա (Equine infectious anaemia)
80. Չիերի վարակիչ մետրիտ (Contagious equine metritis)
81. Չիերի զուգավորման հիվանդություն (Covering sickness)
82. Չիերի պիրոպլազմոզ (Equine piroplasmosis)
83. Չիերի ռինոսինուսիտ (Equine viral rhinotracheitis)
84. Չիերի վիրուսային արտրիտ (Infectious arteritis horses)
85. Չիերի գրիպ (Equine influenza)
86. Չիերի աֆրիկական ժանտախտ (African horse sickness)
87. Չիերի ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտ (Equine encephalomyelitis)
88. Թռչունների բրոնխիտ (Bronchitis infectiosa avium)
89. Թռչունների լարինգոտրախեիտ (Avian infectious laryngotracheitis)
90. Թռչունների Գամբորո (Gumboro disease)
91. Թռչունների Մարեկ (Morbus Marek)
92. Թռչունների պուլորոզ (Pullorum disease)
93. Թռչունների շնչառական միկոպլազմոզ (Avian mycoplasmosis)
94. Թռչունների լեյկոզ (Avian Leukosis Virus)
95. Թռչունների խլամիդիոզ (Avian chlamydiosis)
96. Թռչունների Նյու-Բասլ (Newcastle disease)
97. Բարձր ախտածին թռչնագրիպ (Highly pathogenic avian influenza)
98. Բադերի վիրուսային հեպատիտ (Duck hepatitis virus)
99. Բադերի վիրուսային էնտերիտ (Duck virus enteritis)
100. Գիշատիչների ժանտախտ (*Canine distemper*)
101. Գիշատիչների ինֆեկցիոն հեպատիտ (Infectious canine hepatitis)
102. Գիշատիչների պարվովիրուսային էնտերիտ (Parvovirus enteritis)
103. Գիշատիչների Ալեուտյան հիվանդություն (Aleutian disease of mink)
104. Ճագարների միքսոմատոզ (Rabbit myxomatosis)
105. Ճագարների վիրուսային արյունահոսային հիվանդություն (Rabbit haemorrhagic disease)
106. Ճագարների վարակիչ հարբուխ (Rabbit flu)
107. Մեղունների ամերիկական փտախտ (American foulbrood)
108. Մեղունների եվրոպական փտախտ (European foulbrood)
109. Մեղունների ակարոզ (Acarapidosis)
110. Մեղունների վարոսոզ (Varoosis)
111. Մեղունների սեպտիցեմիա (Bee septicaemia)
112. Մեղունների ասպերգիլիոզ (Aspergillosis bees)
113. Մեղունների ասկոսֆերոզ (Ascospaerosis)
114. Մեղունների հաֆնիոզ (Hafniosis)
115. Մեղունների վիրուսային պարալիչ (*Bee paralysis virus*)
116. Մեղունների տրոպիլելապս ինֆեստացիա (Tropilaelaps infestation of honey bees)
117. Ջրաքիսների վիրուսային էնտերիտ (Mink enteritis virus)
118. Ջրաքիսների պսևդոնոզ (Hemorrhagic pneumonia in mink)
119. Չկների խոցային համախտանիշ (Epizootic ulcerative syndrome)

120. Իշխանի վիրուսային հեմորագիկ սեպտիցեմիա (Viral Haemorrhagic Septicaemia)
121. Ծածանի գարնանային վիրեմիա (Spring viraemia of carp)
122. Սաղմոնի նեկրոտիկ էպիզոոտիկ հիվանդություն (Epizootic haematopoietic necrosis disease)
123. Սաղմոնի վիրուսային նեկրոզ (Infectious haematopoietic necrosis)
124. Սաղմոնի վարակիչ անեմիա (Infectious salmon anemia)
125. Սաղմոնի ալֆավիրուս (Infection with salmonid alphavirus)
126. Խեցգետինների ժանտախտ (Aphanomyces astaci):»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 հունիսի 2018թ.

N 602-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն գրանցելու համար ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք տալու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 94 որոշմամբ հաստատված հավելվածի ձև N 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

«___» _____ 20_____

N _____

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Ծնված՝ _____ թ., իր բնակության վայրի՝ _____, ՔԿԱԳ-ի
տարածքային բաժնի արխիվում ամուսնության ակտի գրանցում չի հայտնաբերվել:

Ստուգվել է _____ թ-ից մինչև _____ թ.:

Միաժամանակ _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

հայտարարել է, որ չունի ամուսնության գրանցում որևէ այլ ՔԿԱԳ-ի մարմնում, և չկան
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ամուսնու-
թյան կնքման արգելք հանդիսացող այլ հանգամանքներ: Նա նախազգուշացված է
ՔԿԱԳ-ի մարմիններին սուտ տեղեկություններ տալու համար Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության մասին:
Տեղեկանքն ուժի մեջ է վեց ամիս:

Կ.Տ.

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունիսի 2018թ.

N 607-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***առաջադրվում է***:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշմամբ սահմանված N2 հավելվածի N1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունիսի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
29-Ի «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» N 370-Ն
ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Համամասնությունների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
10			ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Ծերություն	-	(50000.0)	-	-
		1	Ծերություն	-	(50000.0)	-	-
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	-	(50000.0)	-	-
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(50000.0)	-	-
	9		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	-	50000.0	-	-
		2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	50000.0	-	-
		10	Պետական աջակցություն Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամին	-	50000.0	-	-
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	50000.0	-	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունիսի 2018թ.

N 611-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 11-Ի N 138 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման մասին» N 138 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «Ժա» ենթակետով.

«Ժա) արտադրողների մոտ առկա՝ «2012» թվազրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի:».

2) որոշումը լրացնել նոր հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԱՐՏԱՊՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԱՌԿԱ՝ «2012» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻՉԱՑԻՆ
ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱԼԿՈՀՈԼԱՑԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ
ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ**

1. Մույն կարգով կանոնակարգվում են արտադրողների մոտ 2018 թվականի հուլիսի 2-ի դրությամբ առկա «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման հետ կապված հարցերը:

2. 2018 թվականի հուլիսի 2-ի դրությամբ արտադրողների մոտ առկա՝ «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների (ինչպես չիրացված, այնպես էլ անմիջական գնորդների կողմից վերադրոշմավորման նպատակով վերադարձված) քանակի, դրանց վրա փակցված ակցիզային դրոշմանիշների համապատասխանությունը հարկային մարմնից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերված ակցիզային դրոշմանիշների հետ ճշտելու նպատակով Արցախի Հանրապետությունում պարտադիր դրոշմավորման ենթակա ալկոհոլային խմիչքներ արտադրողները մինչև 2018 թվականի օգոստոսի 1-ը դիմում են ներկայացնում հարկային մարմին: Դիմումն ընդունվելուց հետո երկօրյա ժամկետում հարկային մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ արտադրողի մոտ գույքագրվում են առկա դրոշմավորված ալկոհոլային խմիչքները և կազմվում գույքագրման ակտ:

Պարտադիր դրոշմավորման ենթակա ալկոհոլային խմիչքներ արտադրողները վերադրոշմավորման նպատակով կարող են գնորդներից ընդունել իրենց տրամադրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված և իրենց կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրերով առաքված ալկոհոլային խմիչքներ: Նշված ալկոհոլային խմիչքների ընդունումը և վերադրոշմավորումից հետո վերադարձը պետք է կատարվի գրավոր կազմված ընդունման-հանձնման ակտի համաձայն, որում պարտադիր պետք է նշվեն մինչև վերադրոշմավորումը և վերադրոշմավորումից հետո ապրանքային մնացորդների վրա փակցրած ակցիզային դրոշմանիշների սերիան և համարը, ինչպես նաև առաքվող ապրանքների գրանցման գրքի համապատասխան առաքման գրանցման տողի համարը: Դրոշմավորողների (վերադրոշմավորողների) մոտ վերադրոշմավորման նպատակով ընդունված ալկոհոլային խմիչքների մասով իրականացվում է առանձնացված հաշվառում:

Գույքագրման արդյունքների հիման վրա կազմված ակտում նշված ալկոհոլային խմիչքների քանակը համարվում է նոր նմուշի ակցիզային դրոշմանիշներով վերադրոշմավորման ենթակա քանակ: Կազմված ակտերի մեկական օրինակները պահվում են հարկ վճարողի մոտ և հարկային մարմնում:

3. «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների մնացորդները վերադրոշմավորելու նպատակով արտադրողներն ակցիզային նոր նմուշի դրոշմանիշները ձեռք են բերում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ներկայացնելով դիմում համաձայն N 1 ձևի ու «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ալկոհոլային խմիչքների փաստացի մնացորդների մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի:

4. Վերադրոշմավորումը կատարվում է դրոշմավորման մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերադրոշմավորումը կատարվում է հարկային մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ: Վերադրոշմավորումից հետո կազմվում է արձանագրություն՝ վերադրոշմավորված ակտիվային խմբիչների քանակի (ինչպես նաև ըստ համարների և ըստ տարողությունների օգտագործված (վնասված) ակցիզային դրոշմանիշների) մասին: Արձանագրության մեկական օրինակը՝ հաստատված մասնակիցների ստորագրություններով, տրվում է հարկ վճարողին և հարկային մարմնին:

Նշված արձանագրությանը համապատասխան արտադրողների մոտ առկա չիրացված ապրանքային մնացորդի վերադրոշմավորման համար օգտագործված ակցիզային նոր նմուշի դրոշմանիշների քանակի չափով օգտագործված են համարվում «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները:

5. Վերադրոշմավորման համար հատկացված ակցիզային դրոշմանիշների մասով իրականացվում է առանձնացված հաշվառում:»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՀ ՖՆ _____ պետին
(հարկային մարմնի ստորաբաժանման անվանումը)

Գրանցման N _____

Դ Ի Մ ՈՒ Մ

**ՎԵՐԱԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ
ՁԵՈՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

_____ (հարկ վճարողի անվանումը, գտնվելու վայրը)

_____ (բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական գրանցման (հաշվառման) համարը)

հարկ վճարողի մոտ առկա «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ակոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման համար խնդրում եմ տրամադրել ակցիզային դրոշմանիշներ՝ ընդամենը _____ հատ՝ ըստ կից ներկայացվող տեղեկանքում նշված տեսակների և քանակի, այդ թվում՝ սեփական արտադրության չիրացված ապրանքային մնացորդի համար՝ _____ հատ, անմիջական գնորդների կողմից վերադրոշմավորման նպատակով հանձնված արտադրանքի համար՝ _____ հատ:

Տվյալ ակցիզային դրոշմանիշներն անհրաժեշտ են հարկ վճարողի մոտ առկա՝ «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ակոհոլային խմիչքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման համար:

Հարկ վճարողի կողմից ակցիզային դրոշմանիշների ձեռք բերման համար վճարված գումարը մուտքագրվել է _____ հաշվին՝ վճարային փաստաթղթով « ____ » _____ 20 թ., ընդամենը _____ (տասերով)

ՀՀ դրամ:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ակոհոլային խմիչքների դրոշմավորման կարգին ծանոթ ենք:

Տնօրեն՝

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ՝

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

« ____ » _____ 20 թ.

ԱՀ ՖՆ _____ պետին
(հարկային մարմնի ստորաբաժանման անվանումը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 2-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ՝ «2012» ԹՎԱԳՐՄԱՄԲ
ԱԿՑԻԶԱՑԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱԼԿՈՀՈԼԱՑԻՆ
ԽՄԻՉՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՅՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(հիմք՝ գույքագրման ակտ N _____ կազմված « _____ » _____ 20 թ.)

Գրանցման N _____ « _____ » _____ 20 թ.

_____ (հարկ վճարողի անվանումը, գտնվելու վայրը)

_____ (բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական գրանցման (հաշվառման) համարը)

Սեփական արտադրության չիրացված ապրանքային մնացորդի համար

Հ/Հ	Ապրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Տարայի տարողությունը	2018թ. հունիսի 2-ի դրությամբ ապրանքային մնացորդը (շիշ)

Անմիջական գնորդի կողմից վերադրոշմավորման նպատակով հանձնված արտադրանքի համար

Հ/Հ	Ապրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Տարայի տարողությունը	2018թ. հունիսի 2-ի դրությամբ ապրանքային մնացորդը (շիշ)

Տնօրեն՝ _____

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ՝ _____

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

« _____ » _____ 20 թ.

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2018թ.

N 616-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ակ. Ենիկոլոպովի նրբանցք 6/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,014 հեկտար գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունիսի 2018թ.

N 617-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 350 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,03 հեկտար վարելահողը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2018թ.

N 618-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 11-ի N 598 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Կոճողոտի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,03 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԲԴԽ-14-Ո-1
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՎԻՏԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝ Գ.Գրիգորյանի,
մասնակցությամբ՝ անդամներ Դ.Ավանեսյանի, Ն.Գրիգորյանի,
Կ.Դանիելյանի, Շ.Հայրապետյանի,

ԱՀ դատավորների ընդհանուր ժողովի
Էթիկայի և կարգապահական հարցերի
հանձնաժողովի նախագահ Ա.Աբրահամյանի,

դատավոր Վ.Հայրապետյանի,

քարտուղարությամբ՝ Գ. Հովհաննիսյանի

2018 թվականի հուլիսի 20-ին Ստեփանակերտ քաղաքում, դռնբաց նիստում, քննարկելով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ նաև՝ առաջին ատյանի դատարան/ դատավոր Վիտալի Հայրապետյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 25-ի թիվ ԷԿ-1-01/18թ. որոշմամբ առաջին ատյանի դատարանի դատավոր Վ.Հայրապետյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել առաջին ատյանի դատարանի նախագահ Ա.Թադևոսյանի հաղորդումն Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:

2. Կարգապահական խախտման վերաբերյալ Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը.

Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը ս.թ. հունիսի 19-ին դիմել է

Արցախի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդին /այսուհետ՝
Խորհուրդ/՝ առաջին ատյանի դատարանի դատավոր Վ.Հայրապետյանին
կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդու-
թյամբ: Միջնորդությանը կցվել է առաջին ատյանի դատարանի դատավոր
Վ.Հայրապետյանի կարգապահական խախտման վերաբերյալ Արցախի
Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգա-
պահական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը:

Ըստ եզրակացության՝

«2018թ. մայիսի 17-ին ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանի նախագահ Ա.Թադևոսյանը հաղորդում է ներկայացրել Հանձնա-
ժողովին՝ Դատարանի դատավոր Վ.Հայրապետյանի կողմից, ի պաշտոնե գոր-
ծելիս, վարքագծի կանոնի խախտման մասին:

Հանձնաժողովը նյութերի ուսումնասիրությամբ պարզեց, որ
ԸԻԴ0023/01/16 քրեական գործը՝ ըստ մեղադրանքի Զարդար Տելուշի
Հակոբյանի՝ նախատեսված ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով, ԱՀ
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան մուտքագրվել է
2016թ. մարտի 23-ին, որի քննությունը հանձնարարվել է դատավոր
Վ.Հայրապետյանին, որն այն վարույթ է ընդունել 2016թ. մարտի 31-ի
որոշմամբ, իսկ 2016թ. ապրիլի 13-ի որոշմամբ նշանակել է դատաքննության
նույն թվականի ապրիլի 21-ին, ժամը 11:00-ին Բերձոր քաղաքում: Քրեական
գործի դատաքննությունը երկու անգամ՝ 2016թ. ապրիլի 21-ին, մայիսի 13-ին
հետաձգվել է ամբաստանյալի և նրա պաշտպանի, վկաների չներկայանալու,
դատախազի միջնորդությամբ և նշանակվել 2016թ. մայիսի 27-ին:

2016թ. մայիսի 27-ին դատաքննության ընթացքում ամբաստանյալը և նրա
պաշտպանը միջնորդել են նշանակել տեսաձայնագրային և հետքաբանական
փորձաքննություն, սակայն գործով մեղադրողն առարկել է միջնորդության
բավարարմանը, նշելով, որ տեսաձայնագրման վերաբերյալ նշանակված է
փորձաքննություն և դրանից հստակ տեսանելի է, թե ինչպես է
ամբաստանյալը պատռում քվեաթերթիկը, բայց Դատարանը 2016թ. հունիսի 7-
ի որոշմամբ նշանակել է տեսաձայնագրային և հետքաբանական
փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել է ՀՀ Գիտությունների
ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

Փորձագետի եզրակացությունը ստացվել է 2017թ. հունիսի 20-ին, իսկ
դատարանի 2017թ. հուլիսի 28-ի որոշմամբ նշանակվել է տեսաձայնագրային
փորձաքննություն, որի կատարումը կրկին հանձնարարվել է նույն
փորձագիտական կազմակերպությանը: Փորձագետի եզրակացությունը
ստացվել է 2017թ. օգոստոսի 29-ին:

ԱՀ վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 29-ի օրինական ուժի մեջ
մտած որոշմամբ /քրեական գործ, հատոր 3, գ.թ. 45/ արձանագրվել է.
«...տեսաձայնագրության մեջ երևացող անձանց գործողությունները տեսանելի
են պարզ ակնադիտական եղանակով և առիթ չեն տալիս պնդելու, որ դրանց
գնահատական տալու համար անհարժեշտ է հատուկ մասնագիտական
գիտելիքներ: Այսինքն՝ Դատարանի կողմից նման հարցադրումով
փորձաքննություն նշանակելը, առավել ևս՝ դրա արդյունքում կանխատեսելի
պատասխան /հարցի լուծումը դուրս է փորձագետի իրավասությունից/
ստանալը և այն որպես չփարատված կասկած մեկնաբանելը, իրավաչափ
համարվել չի կարող...»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ոչ իրավաչափորեն փորձաքննություն նշանակելու արդյունքում խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետը, հետևաբար դատավորը, ի պաշտոնե գործելիս, թույլ է տվել վարքագծի կանոնի խախտում:

ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ԱՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ԱՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ որպես ի պաշտոնե գործելիս վարքագծի կանոն՝ դատավորը պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու, ողջամիտ ժամկետում և նվազագույն ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի հրապարակային քննության իրավունք:

ԱՀ դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր են՝ դատավորի կողմից նույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները ղիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով կարգապահական խախտումները համարվում են ղիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել դա:

Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով կարգապահական խախտումները համարվում են կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել այն:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ քրեական գործով դատաքննության ընթացքում տեսաձայնագրային փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չկար, քանի որ տեսաձայնագրության մեջ երևացող անձի՝ ամբաստանյալ Ջ. Տ. Հակոբյանի, գործողությունները տեսանելի էին պարզ ակնադիտական եղանակով, իսկ դրանց գնահատական տալու համար անհրաժեշտ չէր հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ոչ իրավաչափորեն փորձաքննություն նշանակելու արդյունքում խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետը, իսկ դատավոր Վ.Հայրապետյանն ի պաշտոնե գործելիս՝ արդարադատություն իրականացնելիս, թույլ է տվել վարքագծի կանոնի խախտում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ դատավորի կողմից դատաքննության ընթացքում նշանակված տեսաձայնագրային և հետքաբանական համալիր /փաստացի իրականացված՝ փաստաթղթաբանական և հետքաբա-

նական/ փորձաքննության կատարման արժեքը կազմել է 158.010 / հարյուր հիսունութ հազար տասը/ ՀՀ դրամ գումար, որի վճարման համար հաշիվ ապրանքագիրն ընդունել է ԱՀ դատական դեպարտամենտը: Այսինքն, կայացված դատական ակտով ԱՀ պետական բյուջեից կատարվել են չհիմնավորված ծախսեր, ինչն էլ վերաքննիչ դատարանի որոշմամբ բռնագանձվել է ամբաստանյալից:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոշարադրված վարքագծի կանոնի խախտումն ու դրանով պայմանավորված գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումն ակնհայտ է, իսկ դատավորի մեղավորությունը՝ առկա է, քանի որ նա չի դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել այն:

Վերոգրյալից հետևում է, որ դատավոր Վ.Հայրապետյանը, ի պաշտոնե գործելիս, կոպիտ անփութությամբ թույլ է տվել վարքագծի կանոնի խախտում՝ այն է. առանց արդարադատության շահերին վնասելու, ողջամիտ ժամկետում և նվազագույն ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը, քանի որ Դատավորը տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, ուստի ենթակա է խիստ նկատողություն տեսակի կարգապահական տույժի:»:

3. Դատավորի բացատրությունում բերված փաստարկներն ԱՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Առաջին ատյանի դատարանի դատավոր Վ.Հայրապետյանը 2018 թվականի հունիսի 11-ին, Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին ներկայացրել է բացատրություն հետևյալի մասին.

«Ըստ մեղադրանքի Ջարդար Տելուշի Հակոբյանի, նախատեսված ԼՂՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածով ԸԲԴ0023/01/2016 քրեական գործով ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ Անատոլի Թադևոսյանի հաղորդման հիման վրա ԱՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից 2018թ. մայիսի 25-ին հարուցված կարգապահական վարույթի առթիվ, հիմք ընդունելով ԱՀ դատական օրենսգրքի 123-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի կարգավորումը, ներկայացնում եմ սույն բացատրությունը հետևյալի մասին.

Վերը նշած քրեական գործը դատարանի Բերձորի նստավայրում ստացվել է 2016թ. մարտի 30-ին:

2016թ. մարտի 31-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ:

2016թ. ապրիլի 13-ի որոշմամբ քրեական գործը նշանակվել է դատական քննության 2016թ. ապրիլի 21-ին Բերձոր քաղաքում:

Նշված օրը նշանակված դատական նիստը Քաշաթաղի շրջանի դատախազի կողմից առանց գլխավոր դատախազի կողմից տրված լիազորագրի ներկայանալու և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 312-րդ, 313-րդ, 314-րդ հոդվածի 2-րդ և 316-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման համար հետաձգվել է և նշանակվել 2016թ. մայիսի 13-ին:

2016թ. մայիսի 13-ի դատական նիստը դատախազի միջնորդությամբ հետաձգվել է մինչև նույն ամսվա 27-ը:

2016թ. մայիսի 27-ի դատական նիստը հետաձգվել է և նշանակվել հունիսի 3-ին՝ աշխատանքային օրն ավարտվելու պատճառով:

2016թ. հունիսի 3-ի դատական նիստը հետաձգվել է և նշանակվել հունիսի 7-ին՝ նույն պատճառաբանությամբ:

2016թ. հունիսի 7-ի դատական նիստում, պաշտպանական կողմի միջնորդության բավարարման արդյունքում, որոշում էմ կայացրել տեսաձայնագրային և հետքաբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին, որի կատարումը հանձնարարել էմ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

2017թ. մայիսի 20-ի գրությամբ վերը նշած հաստատության տնօրեն Ջավադյանից պահանջել էմ տրամադրել տեղեկություններ համալիր փորձաքննության կատարման ընթացքի վերաբերյալ:

2017թ. հունիսի 5-ի պատասխան գրությամբ վերը նշված ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Մուրադյանը հայտնել է, որ նշանակված համալիր փորձաքննությունը գտնվում է ընթացքի մեջ և հնարավոր կլինի ավարտել մինչև 2017թ-ի հուլիս ամիսն ընկած ժամանակը:

2017թ. հունիսի 20-ին դատարանում ստացվել է փորձագետի եզրակացությունն ու հաջորդ դատական նիստը հրավիրվել է 2017թ. հուլիսի 14-ին:

2017թ. հուլիսի 14-ին նշանակված դատական նիստը դատախազի և ամբաստանյալի ներկայությունն ապահովելու և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասի և 316-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման համար հետաձգվել է և նշանակվել 2017թ. հուլիսի 28-ին:

2017թ. հուլիսի 28-ի դատական նիստում, ուսումնասիրելով նշանակված համալիր փորձաքննության եզրակացությունը, պարզել էմ, որ փորձաքննությունը՝ տեսաձայնագրայինի մասով չի իրականացվել, այսինքն՝ դատարանի որոշումն այդ մասով չի կատարվել, ուստի իմաստագուրկ համարելով լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը, նշանակել էմ տեսաձայնագրային փորձաքննություն՝ վերը նշված ՊՈԱԿ-ում:

2017թ. օգոստոսի 29-ին դատարանում ստացվել է փորձագետի եզրակացությունն ու հաջորդ դատական նիստը հրավիրվել 2017թ. սեպտեմբերի 18-ին ու, կրկին, դատախազի և ամբաստանյալի ներկայությունն ապահովելու պատճառաբանությամբ հետաձգվել մինչև 2017թ. հոկտեմբերի 10-ը:

2017թ. հոկտեմբերի 10-ին ավարտել էմ գործի քննությունը, իսկ հոկտեմբերի 23-ին հրապարակել կայացված արդարացման դատավճիռը:

2017թ. դեկտեմբերի 29-ին ԱՀ վերաքննիչ դատարանը բավարարել է ԱՀ դատախազության վերաքննիչ բողոքը, բեկանել դատական ակտը և կայացրել մեղադրական դատական ակտ:

Հաղորդում ներկայացնող անձը վկայակոչել է ԱՀ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման մեջ արված հետևյալ «... տեսաձայնագրության մեջ երևացող գործողությունները տեսանելի են պարզ ակնադիտական եղանակով և առիթ չեն տալիս պնդելու, որ գնահատական տալու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ: Այսինքն՝ Դատարանի կողմից նման հարցադրումով փորձաքննություն նշանակելը, առավել ևս դրա արդյունքում կանխատեսելի պատասխան /հարցի լուծումը դուրս է փորձագետի իրավասությունից/ ստանալը և այն, որպես չփարատված կասկած մեկնաբանելը, իրավաչափ համարվել չի կարող» եզրահանգումը և հանգել հետևյալ սխալ հետևությանը՝ «Քանի որ վերադաս դատարանի գնահատմամբ ոչ

իրավաչափորեն փորձաքննություն նշանակելու արդյունքում խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետը, հետևաբար՝ ենթադրվում է, որ դատավորը թույլ է տվել վարքագծի կանոնի խախտում»:

Վերադաս դատարանները ողջամիտ ժամկետի խախտման վերաբերյալ հետևություններ չեն արել և ուժի մեջ մտած ակտերում արված եզրահանգումներից կամ պատճառաբանություններից ողջամիտ ժամկետի խախտման վերաբերյալ ենթադրություններ անելն անընդունելի է, քանի որ «ողջամիտ ժամկետի» էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում, դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ ուստի այս դեպքում ողջամիտ ժամկետի պահանջի ենթադրյալ խախտման փաստը գնահատելիս պետք է հաշվի առնվեն միայն օբյեկտիվ պատճառները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից *ողջամիտ ժամկետում* արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արցախի Հանրապետության սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ որպես ի պաշտոնե գործելիս դատավորի վարքագծի կանոն՝ դատավորը պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու, ողջամիտ ժամկետում և նվազագույն ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը:

Արցախի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի հրապարակային քննության իրավունք:

Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը:

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով կարգապահական խախտումները համարվում են դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել դա:

Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով կարգապահական խախտումները համարվում են կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել այն:

Վերը նշած իրավանորմերում և ընդհանրապես ԱՀ Սահմանադրության մեջ և օրենքներում «ողջամիտ ժամկետ» հասկացության վերաբերյալ կոնկրետ կարգավորումներ չկան:

Գործի քննության «ողջամիտ ժամկետ» հասկացության վերաբերյալ առկա են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված մի շարք որոշումներ:

Այդ որոշումների ուսումնասիրությամբ պետք է արձանագրել, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով դիտվում է որպես անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Այս երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ: «Ողջամիտ ժամկետի» էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում, դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը յուրաքանչյուր դեպքում ներպետական վարույթի տևողության ողջամտությունը գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Միաժամանակ, Եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափորոշիչներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառվում են բոլոր գործերի նկատմամբ: Տվյալ դատական գործի բարդությունը, ինչպես դիմողի, այնպես էլ համապատասխան մարմինների այնպիսի վարքագիծը, որն ազդել է դատաքննության տևողության վրա, դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին առնչվում է դատաքննությունը:

Ողջամիտ ժամկետի հետ կապված Եվրոպական դատարանը ելնում է հետևյալ չափանիշներից, 1. գործի բարդությունը, 2. դիմողի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքները, 3. համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը, 4. դիմողի սեփական վարքագիծը:

Միաժամանակ, դատաքննության ժամկետի ողջամտությունը գնահատելիս հաշվի է առնվում կողմի ռիսկի աստիճանի գործոնը, և ակնկալվում է, որ գործերը, որպես կանոն, պետք է քննվեն և ավարտվեն մեկ դատական նիստով:

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն իր մեջ ներառում է նաև գործերի քննության ժամանակ ողջամիտ ժամկետները և կարևորում դատարանների կողմից դրանց պահպանումը: Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող ինչպես սահմանադրական, այնպես էլ Կոնվենցիայի դրույթը նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյու-

նավետությունն ու վստահելիությունը: Ավելին, եթե ժամկետը «ողջամիտ» է, ապա այն պետք է լինի հնարավորինս սեղմ, ուստի օրենսդրի կողմից ամրագրված «ողջամիտ ժամկետ» եզրույթը, չպետք է «կամայական» մոտեցումների տեղիք տա և գործերի քննության անհիմն և չպատճառաբանված, կամայական և անհարկի ձգձգումները, իրենց հերթին լուրջ վտանգ են ներկայացնում իրավունքի գերակայության համար: Մի բան հստակ է, այդ ժամկետը պետք է լինի հենց ողջամիտ և հիմնավորված:

Ըստ ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

Իսկ ըստ նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի՝ ապացույցները հավաքում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում...:

Իսկ վերը նշված գործողությունները Դատարանը պետք է իրականացնի բացառապես նույն օրենսգրքի 370-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովելու նկատառումներից ելնելով, որը, իմ կողմից իրականացվել է փորձաքննություններ նշանակելու միջոցով՝ միայն գործով բազմակողմանի, օրեկտիվ և լրիվ քննություն իրականացնելու համար:

Իմ կողմից քրեական գործի քննության ընթացքում պահպանվել են ԱՀ Սահմանադրության, ԱՀ դատական օրենսգրքի, ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի բոլոր պահանջները, գործադրել եմ պատշաճ ջանասիրություն, ողջամտություն, բավարար ուշադրություն և շրջահայացություն ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու համար: Պահպանել եմ օրինականության սկզբունքը և թույլ չեմ տվել բարոյականության և էթիկայի նորմերի հիման վրա ստեղծված վարքագծի և ԱՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածում ամրագրված որևէ կանոնի խախտում:

Միաժամանակ, ցանկանում եմ Հանձնաժողովին հայտնել, որ վերը նշված քրեական գործով վերադաս դատարանի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, 2018թ. ապրիլի 12-ին, ԱՀ գլխավոր դատախազությունը՝ շրջանցելով Սահմանադրական գործնթացը, ԱՀ քրեական օրենսգրքի 378-րդ հոդվածի հատկանիշներով իմ նկատմամբ հարուցել է թիվ 122001.18 քրեական գործը, և այդ մասին ազդարարել է ԱՀ Ոստիկանության պաշտոնական կայքէջում, և առ այսօր իմ նկատմամբ իրականացնում է քրեական հետապնդում:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ ԱՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների բացարկի, ինքնաբացարկի, որևէ այլ ձևով և եղանակով անհամաձայնություն հայտնելու ինստիտուտ առկա չէ, ուստի պայմանավորված Հանձնաժողովի անդամ Հրայր Աբրահամյանի՝ վերը նշված գործով վերաքննության ժամանակ նախագահող դատավոր հանդիսանալը և Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Աբրահամյանի՝ վճռաբեկության կարգով դատական կազմում գտնվելու հանգամանքը, հարգելով Ձեր անձերը, միջնորդում եմ դիմել ԱՀ դատավորների ընդհանուր ժողովին՝ Հանձնաժողովում Ձեր լիազորությունները դադարեցնելու խնդրանքով, հակառակ՝ իմ նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի հարուցման վարույթը չկարճելու պարագայում մեր հանրապետության և Հայաստանի Հանրապետության իրավական հասարակության բազմաթիվ ներկայացուցիչների համար վստահ եմ,

անհասկանալի և անընդունելի կլինի Հանձնաժողովի կայացրած ցանկացած որոշում:»:

4. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բարձրագույն դատական խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ փաստերը.

1. ԸԲԴ 0023/01/16 քրեական գործով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 23.10.2017թ. կայացված դատավճռի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ դատավոր Վ.Հայրապետյանի կողմից քրեական գործը ստանալուց հետո, այն վարույթ է ընդունվել 31.03.2016թ., 13.04.2016թ. որոշմամբ դատաքննության է նշանակվել 21.04.2016թ.: Գործը քննվել է 21.04.2016թ., 13.05.2016թ., 27.05.2016թ., 03.06.2016թ., 07.06.2016թ. և նույն օրը որոշում է կայացվել նշանակել տեսաձայնագրային և հետքաբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ Գիտությունների ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

Փորձագետի եզրակացությունը ստացվել է 20.06.2017թ., գործը նշանակվել է քննության 14.07.2017թ., 27.07.2017թ. և նույն օրը որոշում է կայացվել նշանակել տեսաձայնագրային փորձաքննություն, որի կատարումը կրկին հանձնարարվել է նույն փորձագիտական կազմակերպությանը:

Փորձագետի եզրակացությունը ստացվել է 29.08.2017թ., գործը նշանակվել է քննության 18.09.2017թ., 10.10.2017թ., իսկ դատավճիռը կայացվել է 23.10.2017թ.:

2. Ընդհանուր առմամբ ԸԲԴ0023/01/16 քրեական գործը դատավոր Վ.Հայրապետյանի վարույթում է գտնվել 1 տարի 6 ամիս 23 օր:

5. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննարկելով ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Վիտալի Հայրապետյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով ԱՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի զեկույցը, դատավորի բացատրությունը, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ԱՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ԱՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ որպես ի պաշտոնե գործելիս վարքագծի կանոն՝ դատավորը պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու, ողջամիտ

ժամկետում և նվազագույն ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի /այսուհետ նաև Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով գործի ողջամիտ ժամկետում քննությունը հանդիսանում է անձի արդար դատաքննության իրավունքի տարր, որը դատարանին պարտավորեցնում է բոլոր դեպքերում գործը քննել և լուծել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ խուսափելով անհարկի ձգձգումներից: Հոդվածը պահանջում է գործերը քննել ողջամիտ ժամկետում, որպեսզի ապահովվի արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունն ու վստահությունը վերջինիս նկատմամբ:

Եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառվում են բոլոր գործերի նկատմամբ: Մասնավորապես, Եվրոպական դատարանը հաշվի է առնում տվյալ դատական գործի բարդությունը, ինչպես դիմողի, այնպես էլ համապատասխան մարմինների այնպիսի վարքագիծը, որն ազդել է դատաքննության տևողության վրա, դիմողի համար այն արժեքի կարևորությունը, որին առնչվում է դատաքննությունը: Ողջամիտ ժամկետի հետ կապված Եվրոպական դատարանը ելնում է հետևյալ չափանիշներից՝ գործի բարդությունը, դիմողի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքները, համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը և դիմողի սեփական վարքագիծը:

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը ելակետային է համարում մի շարք չափանիշներ, նշելով, որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին. հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թվաքանակը, միջազգային գործոնները, դատավարությանը նոր անձանց ներգրավումը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը, վիճելի իրավահարաբերության բնույթին, կիրառելի իրավունքին և այլն: Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը հաշվի է առնում նաև «ժամանակի և տարածության առումով այն հեռավորությունը, որ կա քննվող դեպքերի կամ փաստերի և դատավարական գործընթացի միջև»: Գործի քննության **ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել**, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (**քրեական գործի վարույթի**

կարճում, պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում և այլն): Դատաքննության ժամկետի ողջամտությունը գնահատելիս հաշվի է առնվում կողմի ռիսկի աստիճանի գործոնը, հատկապես այն դեպքում, երբ վեճն իր բնույթով հատուկ է, կամ որի լուծումն էական նշանակություն ունի դիմողի համար: Քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման փաստը գնահատելիս հաշվի են առնվում միայն օբյեկտիվ պատճառները: Իսկ մնացածը՝ դատարանների ծանրաբեռնվածությունը, դատավորների անփորձությունը, դատական կամ ընդհանրապես իրավական համակարգի անկատարությունը, մեղադրյալի և նրա պաշտպանի, ինչպես նաև գործի մյուս մասնակիցների վարքագիծը գործի քննությունը ձգձգելու օբյեկտիվ պատճառ դիտվել չեն կարող:

Վերոնշյալ սահմանադրական, օրենսդրական և Կոնվենցիոն դրույթների վերլուծությունից հետևում է, որ Դատարանը բոլոր դեպքերում գործը պետք է քննի և լուծի հնարավորինս սեղմ ժամկետներում՝ խուսափելով գործի անհարկի ձգձգումներից:

Մույն վարույթում առկա նյութերից պարզվում է, որ ԸԻԴ 0023/01/16 քրեական գործը դատարան է մուտքագրվել 23.03.2016թ., դատավոր Վ.Հայրապետյանի կողմից վարույթ է ընդունվել 31.03.2016թ., 13.04.2016թ. որոշմամբ դատաքննության է նշանակվել 21.04.2016թ.: Գործը քննվել է 21.04.2016թ., 13.05.2016թ., 27.05.2016թ., 03.06.2016թ., 07.06.2016թ. և նույն օրը որոշում է կայացվել նշանակել տեսաձայնագրային և հետքաբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ Գիտությունների ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

Փորձագետի եզրակացությունը ստացվել է 20.06.2017թ., գործը նշանակվել է քննության 14.07.2017թ., 27.07.2017թ. և նույն օրը որոշում է կայացվել նշանակել տեսաձայնագրային փորձաքննություն, որի կատարումը կրկին հանձնարարվել է նույն փորձագիտական կազմակերպությանը:

Փորձագետի եզրակացությունը ստացվել է 29.08.2017թ., գործը նշանակվել է քննության 18.09.2017թ., 10.10.2017թ., իսկ դատավճիռը կայացվել է 23.10.2017թ.:

Ընդհանուր առմամբ ԸԻԴ 0023/01/16 քրեական գործը դատավոր Վ.Հայրապետյանի վարույթում է գտնվել մեկ տարի վեց ամիս 23 օր:

Բարձրագույն դատական խորհուրդը փաստում է, որ ոչ իրավաչափորեն փորձաքննություններ նշանակելու արդյունքում խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետը: Փորձաքննություններ նշանակելու ոչ իրավաչափ լինելը հավաստվում է ԱՀ վերաքննիչ դատարանի 29.12.2017թ. օրինական ուժի մեջ մտած որոշմամբ /քրեական գործ, հատոր 3, գ.թ. 45/, ըստ որի՝ «... տեսաձայնագրության մեջ երևացող անձանց գործողությունները տեսանելի են պարզ ակնադիտական եղանակով և առիթ չեն տալիս պնդելու, որ դրանց գնահատական տալու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ: Այսինքն, Դատարանի կողմից նման հարցադրումով փորձաքննություն նշանակելը, առավել ևս՝ դրա արդյունքում կանխատեսելի պատասխան (հարցի լուծումը դուրս է փորձագետի իրավասությունից) ստանալը և այն, որպես չփարատված կասկած մեկնաբանելը, իրավաչափ համարվել չի կարող»:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է նաև, որ դատավորի կողմից դատաքննության ընթացքում նշանակված տեսաձայնագրային և հետքաբանական համալիր (փաստացի իրականացված՝ փաստաթղթաբանա-

կան և հետքաբանական) փորձաքննության կատարման արժեքը կազմել է 158.010 (հարյուր հիսունութ հազար տասը) ՀՀ դրամ գումար: Այսինքն, կայացված դատական ակտով Արցախի Հանրապետության համար առաջացել է պետական բյուջեից չհիմնավորված ծախս կատարելու պարտավորություն:

ԱՀ դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորի կողմից նույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտումները համարվում են կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել այն:

Բարձրագույն դատական խորհուրդը փաստում է, որ

1) դատավոր Վ.Հայրապետյանը, ի պաշտոնե գործելիս, թույլ է տվել վարքագծի կանոնի խախտում՝ սահմանված ԱՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, համաձայն որի՝ դատավորը պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու, ողջամիտ ժամկետում և նվազագույն ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը,

2) առկա է դատավորի մեղքը, որը դրսևորվել է կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ լինելը:

Վերոգրյալներից հետևում է, որ դատավոր Վիտալի Հայրապետյանը, չպահպանելով իր վարույթում գտնվող գործի քննության ողջամիտ ժամկետը, կոպիտ անփութությամբ թույլ է տվել ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ԱՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, որը ԱՀ դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 3-րդ մասի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում:

ԱՀ դատական օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:

Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առել խախտման հետևանքները, դատավոր Վիտալի Հայրապետյանի անձը, մեղքի աստիճանը և վերջինիս բնութագրող ուշադրության արժանի հանգամանքները, այդ թվում՝ դատավորի նախկինում նույն հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ խորհրդի անդամ Նորայր Գրիգորյանը Բարձրագույն դատական խորհրդի որոշման վերաբերյալ ներկայացրել է հատուկ կարծիք:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԱՀ դատական օրենսգրքի 79-րդ, 118-րդ հոդվածներով, 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով, 125-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 132-րդ հոդվածով, Բարձրագույն դատական խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վիտալի Հայրապետյանին հայտարարել խիստ նկատողություն:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀ՝
ԱՆԴԱՄՆԵՐ՝**

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դ.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Շ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
Դատավոր Վ. Հայրապետյանին կարգապահական
պատասխանատվության ենթարկելու մասին ԱՀ բարձրագույն
դատական խորհրդի որոշման վերաբերյալ

20-ին հուլիսի 2018 թվականի

ք.Ստեփանակերտ

Արցախի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ Նորայր Գրիգորյանս, համաձայն չլինելով Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Վիտալի Հայրապետյանին (այսուհետ, նաև՝ Դատավոր) կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Խորհրդի 2018թ. հուլիսի 20-ի որոշման հետ, ղեկավարվելով Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 79 հոդվածի 6-րդ մասով և 132 հոդվածի 6-րդ մասով, ներկայացնում եմ հատուկ կարծիք՝ հետևյալ բովանդակությամբ.

1. ԱՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 2018թ. հուլիսի 02-ին Խորհուրդ ներկայացված կարգապահական վարույթի նյութերից (այսուհետ՝ Նյութեր) հետևում է, Հանձնաժողովը, ընգծելով, որ Դատավորի վարույթում գտնվող ԸԻԴ/0023/01/16 քրեական գործով դատաքննության ընթացքում տեսաձայնագրային փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտություն չկար, գտել է, որ ոչ իրավաչափորեն փորձաքննությունն նշանակելու արդյունքում խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետը, իսկ Դատավորն ի պաշտոնե գործելիս՝ արդարադատություն իրականացնելիս, կոպիտ անփութությամբ թույլ է տվել վարքագծի կանոնի խախտում: Ընդ որում՝ Դատավորի կողմից թույլ տրված գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումն ակնհայտ է, իսկ Դատավորի մեղավորությունը՝ առկա, քանի որ նա չի դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել այն: Արդյունքում՝ Հանձնաժողովը եզրահանգել է, որ Դատավորը, ի պաշտոնե գործելիս, կոպիտ անփութությամբ թույլ է տվել ԱՀ դատական օրենսգրքի 60 *[հավանաբար, նկատի է ունեցել 50]* հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վարքագծի կանոնի խախտում, որն էլ ԱՀ դատական օրենսգրքի 119 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նրան խիստ նկատողություն կարգապահական տույժի ենթարկելու հիմք է:

2. Խորհրդի անդամների մեծամասնությունը, ըստ էության համաձայնվելով Հանձնաժողովի եզրակացության հետ, իր 2018թ. հունիսի 20-ի որոշմամբ եկել է այն հետևության, որ Հանձնաժողովի եզրակացության մեջ նշված վերոնշյալ պատճառաբանությունները հիմք են՝ Դատավորի կողմից ԱՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վարքագծի կանոնի խախտում թույլ տալու փաստը հաստատված համարելու և նրան խիստ նկատողություն տեսակի կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

3. Գտնում եմ, որ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը պետք է կայացնէր ոչ թե Դատավորին կարգապահա-

կան պատասխանատվության ենթարկելու, այլ գործի վարույթը կարճելու մասին որոշում, հաշվի առնելով, որ գործի քննության արդյունքում ոչ միայն չի հիմնավորվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, այլև կարգապահական վարույթը հարուցվել է ԱՀ դատական օրենսգրքով սահմանված ժամկետի խախտմամբ: Նման համոզմունքի ձևավորման համար հիմք են ընդունում ներքոշարադրյալը.

4. Պարզելու համար այն հարցը, թե Դատավորն իր վարույթում գտնվող ԸԻԴ/0023/01/16 քրեական գործով դատաքննության ընթացքում տեսաձայնագրային փորձաքննություն նշանակելով արդյո՞ք թույլ է տվել ի պաշտոնե որպես դատավոր գործելիս առանց արդարադատության շահերին վնասելու, իր իրավասությանը վերապահված հարցը ողջամիտ ժամկետում չքննելու և չլուծելու ձևով վարքագծի կանոնի խախտում, անհրաժեշտ է, նախ՝ հաշվի առնել դատավորի՝ որպես դատական իշխանության անմիջական և միակ կրողի, համապատասխանաբար՝ արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օժտված անձի սահմանադրաիրավական կարգավիճակին առնչվող միջազգային իրավունքի, սահմանադրության և ներպետական օրենսդրության սկզբունքներն ու պահանջները, այնուհետև՝ այդ համատեքստում վերլուծել ու գնահատել Դատավորի կատարած գործողությունը: Այսպես.

4.1. ԱՀ Սահմանադրության 137 հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ամրագրում են. «1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար՝ բացառությամբ այն դեպքի, երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:»:

4.2. ԱՀ Դատական օրենսգրքի 8 հոդվածի համաձայն՝ Դատարանները դատական իշխանությունն իրականացնում են Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան:

Նույն օրենսգրքի 9 հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ամրագրում են. «1. Արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատարաններն անկախ են պետական իշխանության այլ մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և գործում են միայն Սահմանադրությանը և օրենքին համապատասխան: 2. Դատավորը գործը կամ հարցը (այսուհետ, նաև՝ գործ) քննում և լուծում է Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան, գործի հանգամանքների անաչառ վերլուծության վրա հիմնված իր ներքին համոզմամբ՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:»:

4.3. Դատավորի անկախության հիմնարար արժեքը երաշխավորող՝ վերը շարադրված սահմանադրաիրավական դրույթների հիմքում ընկած են բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթեր: Մասնավորապես, առանցքային նշանակություն ունեն Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985թ. դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված «Դատական մարմինների անկա-

խության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված «Դատավորների վարքագծի բանգալոբյան սկզբունքները», Եվրոպայի խորհրդի կողմից 1998թ. հուլիսի 10-ին ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիան, եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, Եվրոպական Խորհրդի Նախարարների կոմիտեի 1994թ. հոկտեմբերի 13-ի՝ «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» թիվ R(94) հանձնարարականը, Արևելյան Եվրոպայում, Եվրոպական Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2010թ. ընդունված Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին թիվ (2010)12 հանձնարարականը, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ 2010թ. Կիևյան հանձնարարականը, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կողմից 2010թ. ընդունված Դատավորների մագնա կարտան (հիմնարար սկզբունքները):

4.4. Մասնավորապես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 29.11.1985 թվականին հավանության արժանացած Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների 1-ին և 2-րդ կետերը սահմանում են. «1. Դատական մարմինների անկախությունը երաշխավորվում է պետության կողմից: 2. Դատական մարմիններն իրենց հանձնված գործերը վճռում են անաչառ կերպով՝ հիմնվելով փաստերին և առաջնորդվելով օրենքով, հաշվի չառնելով որևէ ուղիղ կամ անուղղակի սպառնալիք կամ միջամտություն, ում կողմից և ինչ պատճառներով էլ այն կատարվի:»:

Իսկ 6-րդ կետը սահմանում է. «Դատական մարմինների անկախության սկզբունքը դատական մարմիններին իրավունք է տալիս և պահանջում է նրանցից արդարացի վարել դատական քննություններն ու ապահովել կողմերի իրավունքները:»:

4.5. Եվրոպական Խորհրդի Նախարարների կոմիտեի 1994թ. հոկտեմբերի 13-ի՝ «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» թիվ R(94) հանձնարարականի 2-րդ կետի «d» ենթակետը սահմանում է. «Որոշման կայացման գործընթացում դատավորները պետք է լինեն անկախ և գործեն առանց որևէ կողմի կողմից կամ ցանկացած պատճառով ուղղակի կամ անուղղակի կողմնակի ազդեցության, ներգործության, ճնշումների, սպառնալիքների կամ միջամտության: /.../ Դատավորները պետք է ունենան անաչառ որոշումներ ընդունելու անսահմանափակ ազատություն՝ ղեկավարվելով իրենց խղճով, փաստերի և իրավունքի գործող նորմերի սեփական մեկնաբանմամբ:»:

4.6. Եվրոպայի խորհրդի կողմից 1998թ. հուլիսի 10-ին ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի 1.1 ենթակետը սահմանում է. «Դատավորի կարգավիճակը նշանակում է իրավասության, անկախության և անաչառության ապահովում, որն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի ստանալ յուրաքանչյուր մարդ այն դատական մարմիններից և դատավորից, որին վստահված է իր իրավունքների պաշտպանությունը: Նշվածը բացառում է ցանկացած դրույթ և ցանկացած գործընթաց, որը կարող է կասկածի տակ դնել այդ իրավասության, անկախության և անաչառության նկատմամբ վստահությունը:»:

4.7. Եվրոպական Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2010թ. ընդունված Դատավորների անկախության, արդյունավետության և պարտա-

կանությունների մասին թիվ (2010)12 հանձնարարականի 22-րդ կետի համաձայն՝ դատական անկախության սկզբունքը նշանակում է գործի լուծման գործառույթն իրականացնելիս յուրաքանչյուր առանձին դատավորի անկախություն: Որոշում կայացնելիս դատավորները պետք է անկախ և անաչառ լինեն և կարողանան գործել առանց որևէ պաշտոնատար անձի, այդ թվում՝ դատական իշխանության ներքին մարմինների կողմից ուղղակի կամ անուղղակի որևէ կողմնակի սահմանափակման, ոչ իրավաչափ ազդեցության, ճնշման, սպառնալիքի կամ միջամտության: Դատական իշխանության հիերարխիկ կառուցվածքը չպետք է խաթալի անհատական անկախությունը:

4.8. «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից 82-րդ լիազումար նիստում 2010թ. մարտի 16-ին ընդունված դատական համակարգի անկախության վերաբերյալ թիվ CDL-AD (2010)004 զեկույցի 6-րդ կետը սահմանում է. «/.../Առանց անկախ դատավորների չի կարող լինել իրավունքների և ազատությունների ճիշտ և օրինական իրականացում: Հետևաբար, դատական իշխանության անկախությունն ինքնանպատակ չէ: Այն դատավորների անձնական առավելությունը չէ, այլ պայմանավորված է դատավորների՝ որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորի դերի իրագործման անհրաժեշտությամբ»:

4.9. Հիշյալ փաստաթղթերի համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու դատավորի կարգավիճակի առնչությամբ մի շարք հիմնադրույթներ, որոնց շարքին են դասվում՝

ա) դատավորի կարգավիճակը պետք է լինի այնպիսին, որպեսզի լիարժեք երաշխավորվի նրա իրավասությունը, անկախությունը և անաչառությունը, նպաստի նրա նկատմամբ հանրության վստահության ձևավորմանը,

բ) դատավորի կարգավիճակին առնչվող դրույթները պետք է ամրագրված լինեն տվյալ երկրի Սահմանադրությամբ կամ նվազագույնը՝ օրենքներով,

գ) պետությունները պարտավոր են դատարանի անկախության սկզբունքի ապահովման համար նախատեսել երաշխիքների գործուն համակարգ, որը պետք է պայմաններ ստեղծի, որպեսզի դատարաններն իրենց հանձնված գործերը քննեն անաչառ, փաստերի հիման վրա և օրենքին համապատասխան, առանց որևէ սահմանափակման՝ ամեն կերպ բացառելով որևէ ոչ իրավաչափ ազդեցության, հարկադրանքի, սպառնալիքի, ուղղակի կամ անուղղակի ճնշման կամ միջամտության հնարավորություն՝ անկախ այն բանից, թե ում կողմից և ինչ պատճառով է դա կատարվում:

4.10. Դատավորների անկախության չափանիշներին է անդրադարձել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որն իր նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով անդրադարձել է դատարանի անկախության համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքի, ինչպիսին է դատարանի վրա արտաքին ներգործությունը և ճնշումները չեզոքացնելու կամ էապես նվազեցնելու նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների առկայությունը (*տե՛ս Քամփբելն ու Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1984թ. վճիռը, գանգատներ գանգատեր N 7819/77, 7878/77, կետ 78*):

4.11. Դատարանի անկախության սկզբունքի վերաբերյալ բազմակողմանի մեկնաբանություններ է տվել նաև Եվրոպայի Խորհրդի համակարգում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, որը, հիմնավորելով դատական իշխանության անկախության սկզբունքը խստորեն պահպա-

նելու անհրաժեշտությունը, շեշտել է, որ դա անհրաժեշտ պահանջ է՝ իրավունքի գերակայությունն ապահովելու և արդար դատավարություն երաշխավորելու համար: Ըստ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ դատավորների անկախության արտոնությունը կոչված է ապահովել ոչ թե նրանց սեփական շահերը, այլ իրավունքի գերակայության շահը, արդարադատություն որոնողների ու ակնկալողների շահերը (*տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, Կարծիք թիվ 1(2001), 2001թ. նոյեմբերի 23, կետ 10*):

4.12. Վերոգրյալ սկզբունքների և իրավանորմների համակցված վերլուծությունից հետևում է, որ դատավորների արտաքին անկախությունը դատավորների սեփական շահերի համար շնորհիվ բացառիկ իրավունք կամ առավելություն չէ, այլ տրված է օրենքի գերակայության և արդարադատություն փնտրող ու ակնկալող անձանց շահերն ապահովելու նպատակով: Դատավորների անկախությունը պետք է դիտարկել որպես ազատության, մարդու իրավունքները հարգելու և օրենքն անաչառ կիրառելու երաշխիք: Դատավորների անաչառությունը և անկախությունն էական են դատարանի առջև կողմերի հավասարությունը երաշխավորելու համար (*Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2010 թվականի Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին թիվ (2010)12 հանձնարարականի 11-րդ կետ*):

4.13. Վերոշարադրյալից բխում է, որ դատական իշխանությանը վերապահված արդարադատության իրականացման հիմնական գործառնության արդյունավետ և իրավաչափ կենսագործումը հնարավոր է միայն անկախ դատական իշխանության առկայության պայմաններում, ինչը ենթադրում է, որ դատարանները պետք է գործեն արտաքին ներգործությունը և ճնշումները բացառող նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների պայմաններում, օրենքով իրենց տրված լիազորությունների հիման վրա, որոնք անհրաժեշտ և բավարար են դատական իշխանության առջև դրված խնդիրներն իրականացնելու համար: Դատավորի անկախությունը, լինելով դատավորի սահմանադրավական կարգավիճակի բաղկացուցիչ տարր, կոչված է ապահովելու դատական իշխանության ինքնուրույնությունը, այն հանրային շահերի, այդ թվում՝ արդարադատության շահերի պաշտպանության կարևորագույն նախապայման է:

Այլ խոսքով ասած՝ դատական իշխանության անկախության սահմանադրական սկզբունքի լիարժեք ապահովումն անհնար կլինի այն դեպքում, եթե դատավորի համար չապահովվի արդարադատության հիմնական լիազորությունն իրականացնելու ժամանակ՝ իր վարույթում գտնվող գործով փաստերն ազատ, առանց որևէ կաշկանդվածության և իրավաչափ սահմանափակման պարզելու, ապացույցներին համակողմանի գնահատական տալու հնարավորություն:

5. Վերը նշվածի համատեքստում դիտարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Հանձնաժողովի եզրակացությունը և այն քննության առնելու մասին Խորհրդի որոշումը, լիովին համաձայն լինելով «գործի ողջամիտ ժամկետում քննություն» եզրույթի իրավական բովանդակության վերաբերյալ Խորհրդի որոշման մեջ արտահայտված դիրքորոշմանը, փաստում եմ հետևյալը.

5.1. Հանձնաժողովը, Դատավորի կողմից ի պաշտոնե գործելիս վարքագծի կանոնի խախտում թույլ տալու մասին իր եզրահանգումը հիմնավորել է նրանով, որ Դատավորը, իր վարույթում գտնվող քրեական գործով **2016թ. հունիսի 07-ի որոշմամբ** նշանակել է տեսաձայնագրային և հետքաբանական **փորձաքննություն**, որը, սակայն, ԱՀ վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 29-ի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ գնահատվել է ոչ իրավաչափ: Ըստ այդմ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ ոչ իրավաչափորեն **փորձաքննություն** նշանակելու արդյունքում խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետը, հետևաբար, Դատավորը, ի պաշտոնե գործելիս, թույլ է տվել ԱՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 6-րդ մասով սահմանված վարքագծի կանոնի խախտում:

5.2. Խորհուրդը, իր հերթին, քննության առնելով Հանձնաժողովի եզրակացությունը, 2018թ. հուլիսի 20-ի որոշմամբ փաստել է. «.../ոչ իրավաչափորեն **փորձաքննություններ** նշանակելու արդյունքում խախտվել է գործի քննության ողջամիտ ժամկետը: Փորձաքննություններ նշանակելու ոչ իրավաչափ լինելը հավաստվում է ԱՀ վերաքննիչ դատարանի 29.12.2017թ. օրինական ուժի մեջ մտած որոշմամբ, ըստ որի՝ «... տեսաձայնագրության մեջ երևացող անձանց գործողությունները տեսանելի են պարզ ակնադիտական եղանակով և առիթ չեն տալիս պնդելու, որ դրանց գնահատական տալու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ: Այսինքն՝ Դատարանի կողմից նման հարցադրումով փորձաքննություն նշանակելը, առավել ևս՝ դրա արդյունքում կանխատեսելի պատասխան /հարցի լուծումը դուրս է փորձագետի իրավասությունից/ ստանալը և այն, որպես չփարատված կասկած մեկնաբանելը, իրավաչափ համարվել չի կարող:»:

5.3. Բացի այդ, ինչպես Հանձնաժողովը, այնպես էլ Խորհուրդն արձանագրելով, որ Դատավորի կողմից դատաքննության ընթացքում նշանակված տեսաձայնագրային և հետքաբանական համալիր փորձաքննության կատարման արժեքը կազմել է 158.010 ՀՀ դրամ գումար, գտել են, որ կայացված դատական ակտով Արցախի Հանրապետության համար առաջացել է պետական բյուջեից չհիմնավորված ծախս կատարելու պարտավորություն: Արդյունքում՝ Խորհուրդը, համաձայնելով Հանձնաժողովի եզրակացության հետ, եզրահանգել է, որ Դատավորը, չպահպանելով իր վարույթում գտնվող գործի քննության ողջամիտ ժամկետը, կոպիտ անփութությամբ թույլ է տվել ԱՀ Սահմանադրության 63 հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին մասի, ԱՀ դատական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ մասի, 50 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 1-ին մասի խախտում:

6. Նախ՝ պետք է փաստել, որ համաձայն ԱՀ դատական օրենսգրքի 128 հոդվածի պահանջի՝ Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործի քննությունը պետք է կատարի միայն այն կարգապահական խախտման սահմաններում, որով կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդություն է ներկայացվել իրեն:

6.1. Ինչպես հետևում է վարույթի նյութերից՝ Հանձնաժողովը Դատավորի կողմից ի պաշտոնե գործելիս վարքագծի կանոնի խախտում թույլ տալու մասին իր եզրահանգումը հիմնավորել է նրանով, որ Դատավորը, իր վարույթում գտնվող քրեական գործով 2016թ. հունիսի 07-ի որոշմամբ

նշանակել է տեսաձայնագրային և հետքաբանական **փորձաքննություն**, որը ԱՀ վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 29-ի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ գնահատվել է ոչ իրավաչափ:

6.2. Մինչդեռ, Խորհուրդը, Դատավորի կողմից ի պաշտոնե գործելիս վարքագծի կանոնի խախտում թույլ տալու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը հիմնավորել է Դատավորի կողմից ոչ իրավաչափորեն **փորձաքննություններ նշանակելու** հանգամանքով: Այսինքն՝ գտնում եմ, որ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործի քննությունը չի կարող կատարվել այն հիմքով, որով միջնորդություն չի ներկայացվել (մասնավորապես, Դատավորի կողմից **փորձաքննություններ նշանակվելը**):

7. Նկատի ունենալով, որ Հանձնաժողովը կարգապահական վարույթ հարուցելիս և Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս գտել են, որ Դատավորը թույլ է տվել ԱՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վարքագծի կանոնի խախտում, ըստ որի՝ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու, ողջամիտ ժամկետում և նվազագույն ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը, գտնում եմ, որ հիշյալ իրավանորմով ամրագրված վարքագծի կանոնի խախտում թույլ տալու հարցը պետք է քննարկել այլ իրավանորմերի համակցության շրջանակներում: Մասնավորապես.

7.1. ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 4-րդ մասը և 6-րդ մասի երկրորդ պարբերությունը սահմանում են. «4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և **իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու** համար:

/.../ Դատարանը, կողմի միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ նյութեր:»:

7.3. Նույն օրենսգրքի 25 հոդվածն ամրագրում է. «**Դատավորը**, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը **ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ**:

2. Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: **Դատավորը**, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը **չպետք է կանխակալ մտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում**:»:

7.4. Նույն օրենսգրքի 134 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:»:

7.5. Նույն օրենսգրքի 135 հոդվածի համաձայն՝ «**Ապացույցները հավաքվում են** հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթաց-

քում՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով:»:

7.6. Նույն օրենսգրքի 136 հոդվածն ամրագրում է. «Գործով հավաքված **ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրները ստուգելու միջոցով:**»:

7.7. Իսկ 137 հոդվածը սահմանում է. «1. **Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝** վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ **գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:** 2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, **դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ:**»:

8. Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ Դատավորի կողմից 2016թ. հունիսի 07-ի որոշմամբ փորձաքննություն նշանակվելը պետք է դիտարկվի վերոհիշյալ դատավարական նորմերով դատավորին վերապահված գործառույթի իրականացում, ինչն էլ տեղավորվում է ԱՀ Սահմանադրությամբ, միջազգային-իրավական փաստաթղթերով և ներպետական օրենսդրությամբ երաշխավորված դատավորի անկախության չափանիշների մեջ: Հետևաբար, այն դեպքում, երբ վերադաս դատարանը ոչ իրավաչափ է համարում ստորադաս դատարանի դատավորի կողմից գործով փորձաքննություն նշանակելը, ապա համոզված եմ, որ նշված հանգամանքը կարող է առավելագույնս քննարկման առարկա դառնալ վերջինիս կողմից արդարադատություն իրականացնելիս դատավարական իրավունքի նորմը դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու, բայց ոչ երբեք՝ ի պաշտոնե գործելիս վարքագծի կանոնի խախտում թույլ տալու հարցի շրջանակներում: Հակառակ պարագայում, անխուսափելիորեն կվտանգվի դատավորի՝ որպես դատական իշխանության միակ կրողի և արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ օժտված անձի, վերոհիշյալ ղեկավար փաստաթղթերով երաշխավորված անաչառ որոշումներ ընդունելու անսահմանափակ ազատություն ունենալու, իրենց խղճով, փաստերի և իրավունքի գործող նորմերի սեփական մեկնաբանմամբ ղեկավարվելու անկախության օբյեկտիվ չափանիշը:

8.1. ԱՀ դատական օրենսգրքի 118 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, **դատական իշխանության անկախությունը հարգելու,** կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության արգելքի և թափանցիկության սկզբունքների հիման վրա:

8.2. Պետք է նշել, որ ինչպես ԱՀ Սահմանադրության 145 հոդվածն ու ԱՀ դատական օրենսգրքը, այնպես էլ Խորհրդի գործառույթային կարգավիճակին վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերը չեն ամրագրել վերջինիս՝ որպես անկախ պետական մարմնի այնպիսի լիազորություն, որով հնարավոր լինի գնահատական տալ դատական ակտում դատավորի կատարած իրավական վերլուծությունների կամ գնահատած փաստերի իրավաչափությունը: Այսինքն, Խորհուրդն օժտված չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում դատական ակտի բովանդակությունը ստուգելու իրավասությամբ: Հետևաբար, ինչպես կար-

գապահական վարույթ հարուցող մարմինը, այնպես էլ Խորհուրդը չի կարող գնահատել անձի արդար դատաքննության իրավունքի առկայության կամ բացակայության փաստը:

8.3. Այս դիրքորոշումը հիմնված է նաև Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ 2010թ. Կիևյան հանձնարարականների վրա: Մասնավորապես, հանձնարարականների 25-րդ կետն ամրագրում է. «Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները պետք է վերաբերեն կոպիտ և աններելի ոչ մասնագիտական վարքագծին, որը վնաս է հասցնում ամբողջ դատական իշխանության հեղինակությանը: Կարգապահական պատասխանատվությունը չպետք է տարածվի որոշումների բովանդակության վրա, այդ թվում՝ դատարանների միջև իրավական մեկնաբանման տարակարծություններին, ինչպես նաև դատական սխալների դեպքերի կամ դատական համակարգի քննադատության վրա:»:

Իսկ հանձնարարականների 28-րդ կետը սահմանում է. «Որևէ պարագայում դատավորները չպետք է գնահատվեն իրենց որոշումների բովանդակության հիման վրա (ինչպես ուղղակիորեն, այնպես էլ վերադասատյանի կողմից նրանց որոշումները բեկանելու վիճակագրության միջոցով): Այն, թե ինչպես է դատավորը լուծում գործը, երբեք չպետք է պատճառ հանդիսանա պատժելու համար /.../»:

8.4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2010թ. ընդունված Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին թիվ (2010)12 հանձնարարականի 69-րդ կետը սահմանում է. «Կարգապահական պատասխանատվություն կարող է վրա հասնել դատավորի կողմից արդյունավետ և պատշաճ կերպով իր պարտականությունները կատարելու անկարողության դեպքում:»:

8.5. Վերոգրյալից հետևում է, որ դատավորը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության իր կայացրած որոշման բովանդակության, անգամ դատական սխալների համար, քանի որ վերջինս հակասում է դատավորի անկախության սկզբունքին: Դատական ակտերը կարող են վերանայվել ու բեկանվել բացառապես վերադատության կարգով և ոչ մի այլ մարմին կամ սուբյեկտ իրավասու չէ գնահատական տալ դատական ակտերին: Հակառակ պարագայում (օրինակ՝ Հանձնաժողովի, Խորհրդի կամ մեկ այլ մարմնի կողմից դատական ակտը գնահատելը), դատավորի անկախության սկզբունքից գատ, կվտանգվի նաև իրավական որոշակիության սկզբունքը:

9. Ըստ այդմ՝ գտնում եմ, որ Դատավորի կողմից իր վարույթում գտնվող քրեական գործով փորձաքննություն նշանակելը՝ վերադաս դատարանի կողմից այն ոչ իրավաչափ գնահատվելու պարագայում անգամ, չի կարող որակվել որպես դատավորի կողմից ի պաշտոնե գործելիս թույլ տրված ԱՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված վարքագծի կանոնի խախտում: Ի դեպ, իզուր չէ, որ դատավարական օրենսդրությունը դատարանի վարույթ ընդունված քրեական գործի քննության հստակ ժամկետ, ի տարբերություն գործի նախաքննության փուլի, չի նախատեսում, քանի որ քրեական գործերը դատարանի վարույթում քննվելու ժամկետի առումով ԱՀ Սահմանադրության 63 հոդվածում, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 1-ին մասում օգտագործված «ողջամիտ ժամկետում» եզրույթը պետք է ընկալվի բացառապես ԼՂՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատարանին վերապահված հստակ ժամկետների շրջանակներում (օրինակ՝ դատավճիռ կազմելու և հրապարակելու, ամբաստանյալին կալանքից ազատելու, հրապարակվելուց հետո դատավճիռը կողմերին հանձնելու և այլ դատավարական գործողությունների կատարման մասին հստակ ժամկետները):

Ուստի, այս առումով Խորհրդին Դատավորի տված այն բացատրությունը, որ իր վարույթում գտնվող քրեական գործով 2016թ. հունիսի 07-ի որոշմամբ փորձաքննություն նշանակելու պատճառ է հանդիսացել գործով ապացույցների (մասնավորապես՝ վկաների ցուցմունքների և իրեղեն ապացույց ճանաչված՝ արարքը տեսանկարահանած սկավառակի) միջև իր մոտ ձևավորված կասկածը վերացնելը և ճշմարտությունը բացահայտելը, պետք է դիտարկել ԱՀ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված՝ իր խղճով, փաստերի և իրավունքի գործող նորմերի սեփական մեկնաբանմամբ անաչառ որոշում ընդունելու անսահմանափակ ազատություն ունենալու սկզբունքի շրջանակներում դատավորի գործունեություն:

Ուստի և՛ առարկայագուրկ է դառնում փորձաքննություն նշանակելով պետական բյուջեից չհիմնավորված ծախս կատարելու մասին հարցի քննարկումը:

10. Միաժամանակ, գտնում եմ, որ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ գործը ենթակա է կարճման այլ հիմքով ևս:

10.1. Մասնավորապես, ԱՀ դատական օրենսգրքի 120 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ կարող է հարուցվել կարգապահական խախտումը կատարվելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ բացառությամբ նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքի:

10.2. Նույն օրենսգրքի 122 հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաղորդումը ներկայացնելու պահի դրությամբ սույն օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի լրանալուն մնացել է մեկ ամսից քիչ ժամանակ, ապա հաղորդում ներկայացնելու պահից այդ ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով:» Նույն հոդվածի 1-ին մասն ամրագրում է կարգապահական վարույթ հարուցելու առիթները:

10.3. Վարույթի նյութերից հետևում է, որ Հանձնաժողովը Դատավորի կողմից գործի քննության ողջամիտ ժամկետը խախտվելու եղանակով ԱՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված վարքագծի կանոնի խախտում թույլ տալու մասին իր եզրակացությունը հիմնավորել է նրանով, որ Դատավորը **2016թ. հունիսի 07-ի որոշմամբ** ոչ իրավաչափորեն է փորձաքննություն նշանակել: Հիմք ընդունելով Խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության սահմաններն ամրագրած ԱՀ դատական օրենսգրքի 128 հոդվածը, գտնում եմ, որ Հանձնաժողովի կողմից Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին **վարույթն** ԱՀ դատական օրենսգրքի 120 հոդվածի 1-ին մասի համաձայն **կարող էր հարուցվել** 2016թ. հունիսի 07-ից հետո մեկ տարվա ընթացքում, այն է՝ **մինչև 2017թ. հունիսի 07-ը**: Մինչդեռ, կարգապահական վարույթը հարուցվել է 2018թ. մայիսի 25-ին, այսինքն՝ դրա համար օրենքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալուց 11 ամիս 18 օր անց:

10.4. Հետևաբար, գտնում եմ, որ կարգապահական վարույթն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ հարուցելը ևս Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճելու հիմք է:

11. Ընդհանրացնելով, գտնում եմ, որ Հանձնաժողովի միջնորդությունը բավարարելու և Դատավորին խիստ նկատողություն հայտարարելու մասին Խորհրդի 2018թ. հուլիսի 20-ի որոշման հետ համաձայն չեմ՝ վերոշարադրյալ պատճառաբանություններից ելնելով:

Եվ քանի որ Հանձնաժողովի կողմից Դատավորին վերագրված արարքը չեմ համարում կարգապահական խախտում, ուստի վերանում է Խորհրդի կողմից Դատավորի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի տեսակին անդրադառնալու անհրաժեշտությունը:

12. Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով ԱՀ դատական օրենսգրքի 79 հոդվածի 6-րդ մասով և 132 հոդվածի 6-րդ մասով, Խորհրդի 2018թ. հուլիսի 20-ի թիվ ԲԴԽ-14-Ո-1/2018թ. որոշման վերաբերյալ ներկայացնում եմ հատուկ կարծիք և

գտնում, որ

Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված՝ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Վիտալի Հայրապետյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը ենթակա է կարճման՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու և կարգապահական վարույթն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ հարուցված լինելու պատճառաբանությամբ:

**ԱՀ Բարձրագույն
դատական խորհրդի անդամ՝**

Ն.Գրիգորյան